ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԳՈՐԻՍԻ ՄԵԼԻՔՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՄԵԼԻՔԻ՝ ՄԵԾ ՄԵԼԻՔ- ՕՀԱՆԻ ՈՒ ՆՐԱ ՈՐԴՈՒ՝ ԲԱՂՐԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ*

Հայերեն վիմագիր արձանագրություններն իրենց ծանրակշիռ տեղն ունեն Գորիսի պատմությունն ավանդող սկզբնաղբյուրների շարքում: Վիմագիր արձանագրությունները հատկապես գնահատելի են Գորիսի մելիքության հիմնադիր Մելիք Օհանյան-Հուսեինյանների տոհմի տարբեր սերունդների կյանքի տարեգրությունը վերականգնելու տեսանկյունից[1]:

Սյունյաց աշխարհի Հաբանդ գավառի հնավանդ ու հարուստ կենսագրություն ունեցող բնակավայրերից է Զագեձորի (Զագաձոր)[2] կամ Վարարակնի լեռնահովտի բարձրադիր գոգա-

---

* Հոդվածը ներկայացվել է 23.11.2019 թ., գրախոսվել՝ 15.12.2019 թ., տպագրության ընդունվել՝ 20.12.2019 թ.:

[1] Մեջբերված վիմագիր արձանագրությունների բնագրերում վերականգնումները կատարել ենք պայմանական հետևյալ նշաններով.

… Կետերով նշված են եղծված կամ ջարդված գրերը՝ անկախ քանակից:

/ Գծով նշված են տողերի սահմանները:

⌈⌉ Փակագծով նշված են եղծված կամ ջարդված տառերի վերականգնումները:

⌊⌋ Փակագծով նշված են փորագրողի բաց թողած, «պատիվ» նշանով կամ առանց դրա հապավված տառերի կամ տառակապակցությունների վերականգնումները:

[2] Սյունյաց տան XIII դ. պատմիչ Ստեփանոս Օրբելյանը «Պատմութիւն Տանն Սիսական» աշխատության մեջ նշում է, որ Սիսակի տոհմից սերված Զագ նահապետը Վարարակն գետակի հովիտը «...կոչէ յիւր անուն զձորն Զագեձոր...» (**Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի** պատմութիւն Տանն Սիսական, ի լոյս ընծայեաց **Մկրտիչ Էմին**, Մոսկվա, 1861 (այսուհետ՝ **Ստեփաննոս Օրբէլեան**, էջ 7): Հատկանշական է, որ XIX դարասկզբի ֆրանսիացի հայագետ Ժան Անտուան Սեն-Մարտենը «Պատմական և աշխարհագրական հիշատակությունները Հայաստանի մասին» (h. II) աշխատության մեջ, որը հիմնականում վերաբերում է Ստեփաննոս Օրբելյանի «Պատմութիւն Տանն Սիսական» երկի քննությանը, Հաբանդ գավառում նույնպես հիշատակում է Զագ (Dsak) անվամբ ձորը (տե՛ս Mémoires historique et géographiques sur l'Arménie, **J. A. Saint-Martin**, t. II, Paris, 1819, p. 129): Նշենք, որ Սյունիքում գյուղերի զգալի մասը տեղավորված է ձորերում, և

վորության վրա, Վարարակն գետակի վերին հոսանք՝ Քրմագետ կամ Վերիշեն[1] վտակի ձախափնյա կանաչապատ ձորամիջում և բլրալանջին ընկած Հին Գորիս (տեղացիների կողմից անվանված Յերի Շեն, Վերին Շեն)[2] գյուղը՝ հնահիմք Գորայք-Գորէս-Գորիս-Կյորես-ը[3]: Գորայք-Գորիս գյուղի տարեգրությունը անխզելիորեն կապված է Սյունյաց պատմության հետ և կազմում է նրա մի մասը: Սկզբնաղբյուրները փաստում են, որ, ասպատակությունների ու անօրեն տիրապետողների հալածանքների պայմաններում, Գորայք-Գորիսը հնարավորինս կարողացել է պահպանել իր գոյությունը և շարունակել ծավալել ազգային մշակութակերտ գործունեություն՝ ի հնուց անտի հանդիսանալով Հաբանդ գավառի քաղաքակրթության բնօրրաններից:

Գորայք-Գորիսը միշտ չի մնացել շեն ու բարգավաճ, այլ, ինչպես Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր, պարբերա- բար ենթարկվել է ասպատակությունների՝ ավերվել ու կո- ղոպտվել է: Գյուղը դեռ շունչ չէր քաշել իրար հաջորդող նվա- ճողների (արաբներ, թուրք-սելջուկներ, մոնղոլ-թաթարներ, Լանկ-Թամուր, սրանց հետքերով՝ կարակոյունլու և աղկոյուն-

---

նրանց անուններն էլ սկսում կամ վերջանում են «ձոր»-ով, օրինակ՝ Կոռնիձոր, Հալիձոր, Այգեձոր, Առաջաձոր, Ձորաշեն և շատ ուրիշ շենաձորեր ու ձորաշեներ:

[1] Քրմագետ կամ Վերիշեն վտակը Վարարակնի ձախ օժանդակն է: Սկիզբ է առնում Աղոթաքարի լեռնանցքի Քոռ աղբյուրից և Վերիշեն գյուղի մոտ միախառնվում մայր գետին: Երկարությունը 5 կմ է (տե՛ս Հայաստանի Հանրապետության ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան, Երևան, 2007, էջ 135): Վարարակն գետակի մյուս օժանդակը Մեծշեն վտակն է: Սկիզբ է առնում Մեծ Իշխանասար լեռան հարավային լանջերից և Ակներ գյուղից արևմուտք միախառնվում մայր գետին: Երկարությունը՝ 11 կմ (տե՛ս նույն տեղում, էջ 84):

[2] Չպետք է շփոթել Ստեփաննոս Օրբելյանի՝ Աղահեջք գավառում հիշատակված «Վերին շէն» բնակավայրի հետ (**Ստեփաննոս Օրբէլեան**, էջ 375):

[3] Գորայք-Գորիս տեղանվան լեզվաբանական-ստուգաբանական քննությունը տե՛ս **Հասրաթյան Մ**., «Ձորաշէն-Գորու», Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1109, ց. 1, գ. 46, թ. 2; **Մարգարյան Ալ**., Գորիսի բարբառը, Երևան, 1975, տե՛ս նաև **նույնի**՝ Մի քանի տեղանունների ծագման մասին, ՊԲՀ, Երևան, 1988, № 4, էջ 123-124; **Քումունց Մ**., «Գորիս» տեղանվան ստուգաբանություն: Գիտական հոդվածների ժողովածու (Նվիրվում է Հրաչյա Աճառյանի ծննդյան 140-ամյակին), Երևան, 2016, էջ 378-396:

լու թուրքմեն քոչվոր ցեղեր) ավերիչ արշավանքներից, հարստահարումներից, երբ ենթարկվում է Արևելյան Այսրկովկասի հարավային (Երասխի (Արաքս), Կուրի միջին ու ստորին հոսանքները)՝ Մուղանի դաշտավայրերում անասնապահությամբ զբաղվող թուրքմենական թերեքեմե (տարբ. թարաքա- մա)[1] կոչվող ռազմատենչ վաչկատուն ցեղախմբերի ասպատակությանը: Թերեքեմեների առաջնորդ ոմն Մահմադ (տարբ. Նեհիլ-Մուհամմեդ)[2] խան Ղաջարը, որը «...շատ երկրներ էր ավերել»[3]՝ աչք ունենալով Արարատյան բարեբեր դաշտավայրի հարստությունների վրա, բավական մեծ բանակի գլուխ անցած՝ 1749 թ. օգոստոսի սկզբներին[4] Մուղանի դաշտից արշավում է Երևանի վրա[5]: Իր չարագործություններով ու դաժանություններով հայտնի Մահմադ խանը ասպատակության է ենթարկում նաև ճանապարհին ընկած շեն ու ծաղկուն հայաբնակ բնակավայրերը, այդ թվում՝ Գորիս-Կյորես գյուղը: Մահմադ խանի արյունարբու զորքերը գազանային չարությամբ թալանում և ավերում են գյուղը. բնակչության մեծ մասը անլուր չարչարանքներով սպանվում, գերեվարվում կամ դառնում է բնավեր:

---

[1] Թերեքեմե «թուրքմեն» բառի արաբերեն հոգնակի ձևն է: Թուրքալեզու թուրքմենական ցեղախմբերը պատկանում էին ղզլբաշ ցեղին (տե՛ս **Петрушевеский И.**, Очерки по истории феодальных отношений в Аэербайджане и Армении в XVI – начале XIX вв., Ленинград, 1949, с. 91-92).

[2] Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա: Կազմեց՝ **Ա. Սաֆրաստյան**, Երևան, 1961, էջ 202-203:

[3] **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ Գ. (ԺԸ-ԺԹ դդ), Երևան, 1955, էջ 172:

[4] Տե՛ս Армяно-русские отношения в втором тридцатилетии XVIII века. Сборник документов, т. III, отв. ред. **В. Восканян**, Ереван, 1978, док. 174, с. 241.

[5] Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.): Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 88:

**Հին Գորիս-Վերին Շեն գյուղի Զոր թաղամասը**

Հաբանդ-Զագեձոր գավառի հինավուրց գյուղերից մեկին հերթական անգամ բաժին ընկած այդ դառն ճակատագիրն աղետաբեր եղավ նրա համար: Անպաշտպան ժողովուրդն այս արհավիրքի դեմ պայքարելու ոչ մի միջոց չուներ. անկարող էր հակահարված տալ թշնամու գերակշիռ բանակին: Այս աղետից հետո երբեմնի բազմամարդ[1] ու նշանավոր գյուղը տևական ժամանակով կորցրեց իր վաղեմի փայլը և վերածվեց ավերակ գյուղատեղիի: Այդ են փաստում

[1] Հավաստի աղբյուրները փաստում են, որ XVIII դարի երկրորդ քառորդի վերջերին գյուղն ունեցել է 700 տուն (տե՛ս **Հայկունի** [**Եղիշե ավ. քին. Գեղամյանց**], Ուղեգնացական ակնարկներ (II), «Մեղու Հայաստանի», Թիֆլիզ, 1886, օգոստոսի 10, № 45, տե՛ս նաև **Արզամ**, Շուշուց Տաթեւ (ճանապարհորդական նկատողութիւններ), «Նոր-Դար», Թիֆլիս, 1888, մարտի 11, № 35): Ընդսմին՝ եթե յուրաքանչյուր տուն միջին հաշվով 5-6 շունչ հաշվվի, ստացվում է, որ գյուղն ունեցել է ավելի քան 3500-4200 բնակիչ: Նկատենք, որ հետազոտվող ժամանակահատվածում նահապետական հայկական գյուղերում, իբրև ընտանիքի ձև, գոյություն է ունեցել մեծ ընտանիքը կամ գերդաստանը: Այդ դեպքում յուրաքանչյուր տուն հաշվվում է ոչ պակաս, քան 10 անդամից բաղկացած: 1885 թ. ամռանը Գորիս գյուղում ուսումնասիրություններ կատարած ժամանակի հայտնի տնտեսագետ Սմբատ Բահաթրյանի տվյալներով՝ գյուղում կային 10 հոգուց բաղկացած ընտանիքներ (տե՛ս **Բահաթրեան Ս.**, Մի հայեացք այժմեան Զանգիազուր գաւառի գիւղացւոց տնտեսական դրութեան վերայ, «Նոր-Դար», Թիֆլիս, 1885, օգոստոսի 22, № 140):

ինչպես ձեռագիր մատյանների, այնպես էլ վիմագիր արձանագրությունների՝ գյուղի մասին լռությունն ու անորոշությունը: Մեծ դժվարությամբ խուսափելով գյուղ ներխուժած ասպատակիչների բարբարոսություններից և հետապնդումներից՝ կոտորածից և գերեվարությունից փրկված գյուղացիները ստիպված թողնում են իրենց պապենական բնօրրանը և ցրվում զանազան կողմեր, ապաստան փնտրում լեռնային անառիկ բնակավայրերում, ծվարում անմատչելի լեռնածերպերում և այլուր: Ֆիզիկական բնաջնջումից փրկվելու համար գյուղացիների մի մասն ապաստանում է Հաբանդ գավառի ամենահին բնակատեղիներից մեկում՝ Շորին ձորից հարավ՝ Ծակեր անունով հայտնի անդնդախոր ձորում (այդպես է կոչվել իր մեծ թվով բնական և արհեստական քարայրների շնորհիվ)՝ պատմական Աղոջրիկ[1] լքյալ բնակավայրում, որի միջով հնուց անտի հոսել է Վարարակն գետակի վտակ Շոր ջուրը: Հիրավի, դժվարամատչելի, կիրճերով ու խոր ձորակներով մեկուսացած այդ արծվաբույնն իր բնաշխարհագրական առանձնահատկություններով, բարձր ժայռերի մեջ և ձորալանջերին փորված անառիկ ու անմատույց բազմաթիվ մեծ ու փոքր այրերով հարմարավետ մի ապաստարան էր թշնամիների՝ դեռևս չդադարող ասպատակություններից պաշտպանվելու համար: Տոհմիկ Գորիս-Կյորեսից, Տեր-Մինասյան գերդաստանից սերող, Հին Գորիս (Վերին Շեն) գյուղի ծխական քահանա Հակոբ Տեր-Մինասյանն իր տոհմի մասին 1919 թ. հունվարին հեղինակած «Հիշատակարան»-ում[2], որում պատկերված

[1] Ա. Ղարագյոզյանի դիտարկման համաձայն՝ Ծակերի ձորը Ստեփաննոս Օրբելյանի հարկացուցակում (հին ցուցակ) հիշատակված «...Աղոջրիկ գյուղն է, որն իր անունը կարող էր ստանալ Շոռ ջուր վտակը կազմող սելտերյան աղբյուրներից... » (**Ղարագյոզյան Ա.**, Զագաձորի տեղադրությունը, ԼՀԳ, Երևան, 1985, № 11, էջ 60): Ս. Հախվերդյանը ձորափի աջափնյա տափարակում ընկած ներկայիս *Ղջիազի* տեղանունը համադրում է Աղոջրիկ անվան հետ և իրավամբ գտնում, որ «…այդ հողատարածքը պատկանել է Աղոջրիկ գյուղին» (**Հախվերդյան Ս.**, Գորիսի ամփոփ պատմություն, Երևան, 2005, էջ 31):

[2] Հակոբ քհն. Տեր-Մինասյանի ձեռագիրն առաջին անգամ «Հիշատակարան» խորագրով որոշ կրճատումներով հրատարակել է արձակագիր Սերո Խանզադյանը: Ձեռագիրը գրողին էր հանձնել Հակոբ քհն. Տեր-Մինասյանի Փառանձեմ դստեր որդին՝ պրոֆ. Վազգեն Գրիգորի Հայրապետյանը (տե՛ս **Խանզադյան Ս.**, Տեր-Հակոբ

իրադարձությունները մեզ տանում են գյուղի պատմության խորքերը, «Ծագումն հօրն իմոյ Մինաս քահանայի» ենթագլխում գրում է. «Իմ հայրը՝ Մինաս քահանան բուն Գորիս գիւղացի է եղել, Մինասանց տոհմից: ...Մեր մեծ պապը եղել է Մինասանց Թունին[1] ...Դոքայ հին Գորիսից տաճիկների և պարսիկների ասպատակութիւնների ժամանակները ապաստանած են եղել **Գորիս գիւղից բարձր ծորակում, որտեղին ծակերի ծոր են ասում, նոյնպէս և շորջրի ծոր են ասում** (ընդգծումը մերն է՝ *Գ.Ս.*), այդտեղ մեր պապ Թունին մեռնում է, գերեզմանը յայտնի չէ...»[2]: Ողբերգական դիպվածից փրկված և գաղթի ուղին բռնած Գորիս-Կյորեսի տարաբախտ բնակիչների մի մասը, հարկադրաբար հեռանալով հայրենի եզերքից, հանգրվան է գտնում նաև Արցախում, իսկ առևտրական դասը՝ ընդհուպ նաև Ռուսաստանում, Վրաստանում և Պարսկաստանում[3]:

Աղետաբեր այդ դեպքերի պատկերը լիակատար և բազմակողմանի ներկայացնելու համար ստորև վկայաբերենք աղբյուրների հաղորդած վավերական վկայությունները: Այս առումով, պատմական հենք պարունակող ավանդազրույցներից և ձեռագիր մասունքներից բացի, աշխարհագրական-տեղագրական ու պատմաազգագրական նյութի կարևորությամբ աղբյուրագիտական սկզբնաղբյուրի դեր են ծառայում նաև ճանապարհորդ-տեղագիր հեղինակների հաղորդած տեղեկությունները: Հատկանշական է այն իրողությունը, որ այդ ճանապարհորդական նոթերի շնորհիվ նաև գիտական աշխարհը ճանաչեց Գորայք-Գորիսի անցյալի պատմության որոշ դրվագներ:

---

Տեր-Մինասյան Գորիսեցու «Հիշատակարանը», ԲՀԱ, Երևան, 1989, № 2, էջ 125-136): Ձեռագիրը ներկայումս պահվում է Հայաստանի ազգային արխիվում, Ս. Խանզադյանի անվանական ֆոնդում (ֆ. 798, ց. 1, գ. 1220, թ. 1-172):

[1] Սյունիքի և Արցախի ժողովրդաբարբառային խոսվածքին բնորոշ առանձնահատկությամբ Հարություն անձնանունը կրճատվում և արտասանվում է նաև Արութին, Արթին, Արութ, Հարութ, Արթո, Թյունի, Աթուն ձևերով (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 519-520):

[2] ՀԱԱ, ֆ. 798, ց. 1, գ. 1220, թ. 136-ի շրջերես:

[3] Տե՛ս **Արզամ**, Շուշուց Տաթեւ (ճանապարհորդական նկատողութիւններ), «Նոր-Դար», Թիֆլիս, 1888, մարտի 11, № 35:

Քննվող հարցի լուսաբանման համար առանձնահատուկ են 1887 թ. ամռանը[1] Զանգեզուրի գավառում ճանապարհորդած «Արգամ»[2] ստորագրությամբ հանդես եկած հեղինակի՝ «Նոր-Դար»-ի 1888 թ. մարտի 11-ի համարում հրատարակած «Շուշուց Տաթեւ (ճանապարհորդական նկատողութիւններ)» ուղեգրական նոթերը, որոնցում Գորիսի հնաբնակներից գրառած տեղեկություններից հնարավոր է դառնում պարզել վերոնշյալ իրադարձություններին վերաբերող որոշ մանրամասնություններ: Սկզբնաղբյուրային ու վավերական կարևոր արժեք պարունակող այս նոթերը ցարդ անծանոթ են եղել գիտական շրջանակներին, ուստի ստորև մեջբերում ենք ամբողջությամբ: Ըստ իր ձեռքի տակ եղած աղբյուրների՝ Արգամը գրում է. «Կօրիսը իւր համանուն գետով բաժանվում է երկու մասի. հիւսիս-արևելեան կողմը մի ահագին ժայռից կպած է Կօրիս գիւղը, իսկ նրա հանդէպ մի երկայն տափարակում–քաղաքը…: …Հին Կօրիսը գտնվում էր այստեղից (գավառակենտրոն Գորիսից - *Գ. Ս.*) 2 վերստ հեռու դէպի արևելք (հարկավ, տպագրական սխալ է, պետք է լինի հյուսիս - *Գ. Ս.*)՝ 700 տուն բնակիչներով, սակայն տեղն ամուր չլինելով, պարսից արշաւանքների ժամանակները ցիր և ցան են եղել և, ինչպէս ասում են, բնակիչների մի մասը գաղթել է Ռուսիա, մինը Վրաստան և միւսը կուլ է գնացել նոյն իսկ Պարսկաստանի մէջ... մնացել են միայն 18 տուն հայեր: Օհան անունով մի հայ կամենալով այս մնացեալն էլ իրեն բաժին անել և ազատել մի կերպ հրոսակների ասպատակութիւնից՝ առնում է սրանց և բերում այն ահագին և անմատչելի ժայռի տակ, որտեղ այժմ Կօրիս գիւղն է: Օհանը կարգվում է գիւղի իշխան և պետ, և համարվում այժմեան Մելիք-Հիւսէինեանների նախապապը: Գիւղը ընդլայնելով հետզհետէ շատանում են բնակիչները և դառնում են Մելիք-Օհանի հպատակ: Օհանի ժառանգներից այժմ Կօրիսում գտնվում է մեծ Մա-

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Հեղինակի ինքնությունը պարզել չհաջողվեց: Սակայն նրա՝ «Նոր-Դար»-ին հղած մեկ այլ թղթակցությունից հայտնի է դառնում, որ եղել է շուշեցի (տե՛ս **Արգամ**, Շուշի, «Նոր-Դար», Թիֆլիս, 1890, ապրիլի 6, № 38):

նուչար-բէկ Մելիք-Հիւսէինեանցը – մի պատկառելի և ազդեցիկ անձնաւորութիւն և Կօրիսի առաջին տուն»[1]:

Այժմ տեսնենք, թե մեզ հուզող դեպքն ինչպես է նկարագրում գիտական ազգագրության երախտաշատ և նշանավոր ներկայացուցիչ Երվանդ Լալայանը, ով ազգագրական-բանահյուսական նյութեր հավաքելու նպատակով 1897 թ.[2] ամռանը ճանապարհորդել է Զանգեզուրի գավառում: Գիտնականը Զագեձորի հովտում գիտնական-հետազոտողի բարեխղճությամբ հավաքած ազգագրական նյութերի՝ գրառում-պատումների հիման վրա «Զանգեզուր» ուսումնասիրության մեջ՝ «Մելիք Հիւսէինեաններ» վերտառությամբ ենթագլխում, վկայաբերում է Նոր Գորիսի հիմնադիր Մեծ Մելիք-Օհանի տոհմի շառավիղներից Մելիք-Հարությունի որդու՝ Մանուչար բեկ Մելիք-Հուսեինյանի՝ իր տոհմի մասին հաղորդած տեղեկությունները, որոնք ստուգապատում սկզբնաղբյուր են Գորիսի պատմության ուսումնասիրության համար և փոքր-ինչ այլ իրերի ընթացքով հավաստում ու էապես լրացնում և ամբողջացնում են Արգամի ուղեգրական նոթերի բովանդակած տեղեկությունների ճշմարտացիությունը: Ինչպես վկայում է Ե. Լալայանը, «Այս տոհմից այժմ կենդանի է Մանուչար բէկը, վերջին Մելիք Յարութիւնի որդին, ամենից սիրուած ու յարգուած անձ-

---

[1] **Արգամ**, Շուշուց Տաթեւ (ճանապարհորդական նկատողութիւններ), «Նոր-Դար», Թիֆլիս, 1888, մարտի 11, № 35:

[2] Ե. Լալայանը Զանգեզուրի գավառում ճանապարհորդել է նախապես պատրաստված գիտական ծրագրով: Ձեռնարկելով որևէ շրջանի ուսումնասիրությունը՝ նա օգտագործում էր մատենագիրների և այլ հեղինակների անտիպ կամ տպագրված հատուկենտ տեղեկություններն ու հավաքած նյութերը՝ հարստացնելով իր աղբյուրագիտական հենքը: «Զանգեզուր» հատորի հրատարակությունը պատրաստելուց առաջ՝ «Ազգագրական հանդէս»-ի 1897 թ. Բ գրքի «Այլ եւ այլք» բաժնում նա ընթերցողներին հայտնել էր. «Արդէն ձեռնարկուած է նիւթեր հաւաքելու Լոռու (Տաշիր) և Զանգեզուրի գաւառների մասին, ուստի խնդրում ենք, որ նիւթեր ունեցողները ուղարկեն մեզ իրենցն էլ, մերիններին հետ միացնելու: Պարզ է, որ իւրաքանչիւր նիւթ կը տպագրւի հաւաքողի ստորագրութեամբ» («Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1897, գիրք Բ, էջ 381): Ի դեպ՝ նշենք, որ Ե. Լալայանը Զանգեզուրի գավառում շրջագայել է նաև 1903 թ. ամռանը՝ Կովկասյան հնագիտական ընկերության անդամ եղած ժամանակ (տե՛ս Հնագիտական ընկերութեան նիստը, «Մշակ», Թիֆլիս, 1903, յունիսի 3, № 117):

նաւորութիւն, որ սիրով պատմեց ինձ իւր տոհմի պատմութիւնը և ցոյց տուեց մելիքներից մնացած գրութիւնները»[1]:

Ե. Լալայանը, հենվելով Մանուչար բեկ Մելիք-Հուսեինյանի իրապատման և նրա տրամադրած արժանահավատ վավերագրերի վրա, դրանք լրացնելով հինավուրց Քարահունջ գյուղի Տեր Հովսեփ քահանայի վավերականություն ունեցող տեղեկություններով ու տարեց մարդկանց սերնդեսերունդ պատմվող ավանդազրույցներով[2], փաստագրում է, որ «Մելիք-Հիւսէինեանների տոհմը յառաջացել է հին գորիսեցի խոջա Լազարի[3] որդի Լալայից, որի աւագ եղբայր Պարոնից սերել են այժմեան Պարոնեանները[4], իսկ կրտսեր եղբայր Աւագից՝ Աւագեանները: ...Կարճ միջոցից յետոյ թարաքեամայ թափառականները յարձակւում են Հին Գորիսի վրայ, բնակիչներին կոտորում, թալանում և ցրւում»[5]: Թերեքեմե հրոսակների վայրագությունների հետևանքով կոտորածի զոհ է դառնում նաև գյուղի մեծատուն տոհմից սերող խոջա Լազարի (Ղազար) թոռը, Լալայի որդի՝ Բաղրը, որի երկու զավակները՝ Օհանն (Յոհան)[6] ու Ամիրը, մազապուրծ հաստատվում են Արցախի

---

[1] **Լալայեան Ե.**, Զանգեզուր: Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1898, գիրք Դ, № 2, էջ 8:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Վիմագրական տեղեկությունները փաստում են, որ Մելիք-Հուսեինյան տոհմի նախահայրն էր Մկրտիչը: Նրա որդին՝ խոջա Լազարը (Ղազար), մահացել է 1688 թ.: Գերեզմանը գտնվում է պատմական Գորայք-Գորիսում, ներկայիս Վերիշեն գյուղի հին գերեզմանատանը: Տապանաքարին արձանագրված է. «**ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԿՐՏՉԻ ՈՐԴԻ ՂԱԶԱՐԻՆ» ԹՎ. ՌՃԼԸ**» (**1688**) (**Բաբայան Ա.**, Այր Մեծ իշխան Մելիք Օհանը Գորիսի մելիքության հիմնադիր, «Բան ու Գործ», Գորիս, 2012, հունվարի 27, № 1-2): Լազարի որդին էր Լալան, որը մահացել է 1713 թ. և թաղվել Վերիշեն գյուղի Ս. Հռիփսիմե եկեղեցու բակում: Տապանաքարին արձանագրված է. «**ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԼԱԼՈՒՆ ԹՎ. ՌՃԿԲ**» (**1713**) (նույն տեղում):

[4] Պարոնյան նշանավոր գերդաստանի շառավիղները մեծ դերակատարություն են ունեցել Գորիսի հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքում: Տոհմի շառավիղները հասարակությանը շատ արժանավոր զավակներ են տվել՝ պետական պաշտոնյա, գեղանկարիչ, բժիշկ, առևտրական և այլն:

[5] **Լալայեան Ե.**, Զանգեզուր, էջ 8:

[6] Նկատենք, որ Հովհաննես անձնանվան գրության նկատմամբ հայ մատենագիտության մեջ դարերի ընթացքում մշակվել է այդ անձնանվան տարբեր գրության ինչ-որ ավանդույթ: Գրության բազմազանության օրինակներից են՝ «Յոհանէս, Յով-

Մելիք-Շահնազար Բ-ի (իշխել է 1748-1792 թթ.) տիրույթում գտնվող Չանախչի գյուղում[1]: Օհանը, որը եղել է քաջակորով անձնավորություն և դեռևս պատանի հասակում ռազմունակությամբ աչքի էր ընկել Դավիթ-բեկի գլխավորած Սյունյաց ազատամարտի ժամանակ[2], շատ չանցած այստեղ ևս հայտնի է դառում իր քաջագործություններով և ամուսնանում է «…շոշեցի[3] մի մեծատան աղջկայ հետ»[4]:

Որոշ ժամանակ անց, երբ դադարում են վաչկատուն ցեղախմբերի հարձակումները, երբեմնի շեն ու ծաղկուն Գորայք-Գորիս գյուղը վերականգնելու նպատակով արհավիրքից փրկված և անառիկ վայրերում ապաստանած անտերունչ փոքրաթիվ գյուղացիները դիմում են Օհանին, որ «…գայ իրենց

---

հանէս, Յովհան, Յոհան, Յոնան, Յովան, Էգան, Եկան, Օհան» և այլն (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 537-538):

[1] Տե՛ս **Լալայեան Ե.**, Զանգեզուր, էջ 8:

[2] 1841 թ. ամռանը վիմագրական նյութեր հավաքելու նպատակով Գորիս գյուղ այցելած Սանահինի վանքի վանահայր երախտաշատ Սարգիս վրդ. Ջալալյանցն իր «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» ճամփորդական-տեղագրական մեծարժեք աշխատության «Կորիս» վերտառությամբ ենթագլխում ուշագրավ տեղեկություն է հայտնում (ամենայն հավանականությամբ բանավոր զրույցներով ավանդված) գորիսեցի «անպարտելի այրն Յօհան»-ի մասին, որը «…միացեալ ընդ Դաւիթ իշխանի արար զքաջութիւնս բազումս» (**Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 309):

[3] Շոշը սկզբնական շրջանում եղել է Վարանդա գավառի գյուղերից և պատկանել է Մելիք-Շահնազարյաններին: Ներկայումս գտնվում է Ասկերանի շրջանում, Շուշի քաղաքից 4 կմ հարավ-արևելք՝ Կարկառ գետի աջափնյակում: Նշենք, որ գյուղը Շոշ, Շօշու ավան անվամբ հիշատակվում է միայն Մակար եպս. Բարխուտարեանցի մոտ (տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 228-229, տե՛ս նաև **նույնի՝** Պատմութիւն Արուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 99): Պատմական այլ աղբյուրներում գյուղը ներկայացվում է Շուշու կամ Շուշոյ, Շուշի, Շուշի գյուղ, անուններով (տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Մասն Ա (1401-1450 թթ): Կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Երևան, 1955, էջ 384, տե՛ս նաև **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, էջ 244, տե՛ս նաև **Բալայան Վ.**, Շուշի. Տեղն ու դերը Հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, 2017, էջ 51): Ըստ Ս. Սարգսյանի՝ «…Շոշն ու Շուշին համանուն բնակավայրեր են եւ փաստորեն միմյանցից տարբերելու համար է գյուղը Շոշ կամ Շուշի քենդ (Շուշի գյուղ) անունները ստացել» (**Սարգսյան Ս.**, Արցախի բնակավայրերը (ստուգաբանություններ), Երևան, 2018, էջ 47):

[4] **Լալայեան Ե.**, Զանգեզուր, էջ 8:

մելիք դառնայ…»[1]: Նույն խնդրով գյուղացիները դիմում են նաև Մելիք-Շահնազար Բ-ին, որի միջնորդությամբ Ղարաբաղի խանության հիմնադիր Փանահ Ալի խան Զևանշիրը (իշխել է 1747-1763 թթ.) Օհանին՝ «Գորիս, Խոտ, Շնհէր, Հալիձոր, Քարահունջ, Ալիղուլիքենդ (Ազատաշեն - *Գ. Ս.*)[2], Տաշքենդ (Քարաշեն - *Գ. Ս.*)[3], Մաղանջուղ[4], Կորու[5]»[6] գյուղերի նկատմամբ շնորհում է մելիքական տիտղոս և ժառանգաբար իշխելու իրավունք[7]:

---

[1] Նույն տեղում, էջ 9:

[2] Ալիղուլիշեն, Ուրղունիշեն, Աթղունի գյուղը Ազատաշեն է վերանվանվել 1940 թ. (տե՛ս **Հակոբյան Թ.**, **Մելիք-Բախշյան Ստ.**, **Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ ՀՀՇՏԲ), հ. 1, Երևան, 1986, էջ 40, 85-86): 1898 թ. աշնան վերջերին գյուղ այցելած «Նոր-Դար»-ի գավառական թղթակից Տիգրան Խոջա-Թումանյանը ուղեգրական նոթերում գյուղի մասին հայտնում է հետևյալ տեղեկությունը. «Ալիղուլին հայկական գիւղ է՝ ընկած մի փոքրի սարահարթի վրայ արեգուն տեղ: …ունի 100 ծուխ, մի աղքատ և անշուք եկեղեցի և մի քահանայ» (*** [**Խոջա-Թումանյան Տ.**], Ճանապարհորդական ակնարկներ, «Նոր-Դար», Թիֆլիս, 1899, ապրիլի 10, № 64):

[3] Ներկայիս Քարաշեն գյուղն է (տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 5, Երևան, 2001, էջ 317-318): Գյուղը հիշատակվում է Տաթևի վանքի 1730 թ. պտղացուցակում և 1781 թ.« Քէօթուկ» մատյանի հարկացուցակում (տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան (այսուհետ՝ Մատենադարան), ձեռ. № 1488, 215ա-215բ, 219բ, տե՛ս նաև Ժամանակագրութիւն **Ստեփաննոսի Օրբէլեանի**: Հրատարակության պատրաստեց **Ա. Աբրահամյանը**, Երևան, 1942 (հավելված), էջ 42:

[4] Մաղանջուղ, Մահանձու, Մաղանջուխ գյուղը հիշատակված չէ Ստեփաննոս Օրբելյանի հարկացուցակում (հին ցուցակ): Գյուղը «Զանկազուրու գաւառ»-ում *Մաղանձուղ* ձևով առաջին անգամ հիշատակվում է Տաթևի վանքի 1781 թ. «Քէօթուկ» կոչված մատյանի հարկացուցակում (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 1488, 219բ): Գտնվել է Գորիս քաղաքից 3-4 կմ հարավ-արևելք (տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 3, Երևան, 1991, էջ 658): Ունեցել է Ս. Հռիփսիմե եկեղեցին: ՀՍՍՀ Գերագույն խորհրդի 1950 թ. ապրիլի 19-ի հրամանագրով բնակավայրը վերանվանվել է Այգեձոր (տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 227):

[5] Գորու, Կյորէ, Կյորու գյուղը գտնվել է Գորիս քաղաքից 2 կմ հարավ-արևելք, Խնձորեսկ գյուղից 2-3 կմ հարավ-արևմուտք: ՀՍՍՀ Գերագույն խորհրդի 1950 թ. ապրիլի 19-ի հրամանագրով վերանվանվել է Զորաշեն (տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 3, Երևան, 1991, էջ 486): 1970-1974 թթ. Զորաշեն, Ազատաշեն (Ալիղուլիշեն) և Այգեձոր գյուղերի միավորմամբ կազմավորվել է Հարթաշեն գյուղը (տե՛ս ՀՀՇՏԲ, հ. 1, էջ 40, 227, տե՛ս նաև ՀՀՇՏԲ, հ. 3, էջ 386):

[6] **Լալայեան Ե.**, Զանգեզուր, էջ 9:

[7] Տեղին է նշել, որ իրավական առումով գոյություն ունեին երեք կարգի մելիքներ: Առաջին կարգին պատկանում էին այն մելիքները, ովքեր իրենց արտոնված դիրքը կա՛մ ժառանգում էին իրենց նախնիներից, կա՛մ թե ստանում էին պարսից շահերի ֆերմաներով: Նրանք ազատ էին ամեն տեսակ հարկերից: Երկրորդ կարգի

Այսպիսով՝ հանձին Մելիք-Օհանի, Ղարաբաղի խանության կազմում Սյունյաց Հաբանդ գավառում հիմնվում է մի նոր մելիքություն[1]:

Մեր ձեռքի տակ եղած աղբյուներում Օհանի՝ մելիքական տիտղոսի շնորհման ստույգ թվականի մասին ուղղակի վկայություններ չկան: Սակայն դատելով իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունից՝ այն պետք է, որ տեղի ունեցած լիներ XVIII դ. 50-ական թվականների վերջերին: Եվ ուրեմն այս ժամանակահատվածը պետք է ընդունել Գորիսի մելիքության պատմության սկիզբ, որովհետև, որքանով այդ թույլ են տալիս վավերագրերի տվյալները, դրանից ավելի վաղ չեն հիշատակվում ոչ միայն մելիքությունը, այլ նաև մելիքները: Արդ՝ Մելիք-Օհանին պետք է վերագրել Հաբանդ գավառում Ղարաբաղի խանությանը ենթակա մի նոր մելիքության հիմնադրի իրավունքը: Դրանով իսկ Մելիք-Օհանը իրավամբ վաստակել է «Մեծ» պատվանունը, որն արձանագրված է նրա տապանաքարին[2]: Ընդսմին՝ մելիքական տիտղոս ստացած Օհանը Սյունիքում հիմք է դնում մելիքական մի նոր տոհմի՝ Օհանյանների և

---

մելիքներն իրենց իրավունքները ստանում էին խաներից: Երրորդ կարգի մելիքները նրանք էին, ովքեր ժամանակավոր կառավարում էին համայնքները և խաներից անգամ հրովարտակ չունեին ստացած (տե՛ս **Լեո**, Հայոց պատմություն, հ. Գ, գիրք Ա, Երևան, 1969, էջ 81): Արդ՝ Փանահ Ալի խանից մելիքական տիտղոս ստացած Մեծ Մելիք Օհանը դասվում էր երկրորդ կարգի մելիքների շարքը: Հատկանշական է, որ նորահաստատ այդ մելիքությունը ևս ձեռք էր բերել մելիքական տիտղոսին ժառանգաբար տիրելու իրավունք: Մակար եպս. Բարխուտարյանցի պարզաբանմամբ. «Ժառանգական էր հարազատ մելիքութիւնն: Երբ վախճանում էր մելիք հայրն, գահակալում էր նորա անդրանիկ որդին, իսկ երբ, անչափահաս էին լինում անդրանիկներն կամ անհամապատասխան մելիքութեան, գահակալում էին վախճանուածների կարող և արժանաւոր եղբայրներից յարմարագոյններն և կամ չափահաս որդիներն: Անդրանիկներն անյարմար եղած դէպքում թողնում էին գահակալութիւնը իւրանց փոքր, ընդունակ և կարող եղբարց» (**Բարխուտարեանց Ս.**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ Զ):

[1] Գորիսի մելիքության և Հին ու Նոր Գորիսների տեղադրության մասնրամասն քննությունը տե՛ս **Ստեփանյան Գ.**, Սիմեոն Տեր-Մինասյան. մանկավարժն ու հրապարակախոսը (Գորիսի պատմության դրվագներ), Երևան, 2019 (ձեռագրի իրավունքով):

[2] Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Գորիս (դաշտային հետազոտական նյութեր (այսուհետ՝ ԴՀՆ), (2011-2012 թթ.), տետր № 2, էջ 5:

նրանից սերված Հուսեինյանների, որոնց և վիճակված էր մեծ դեր խաղալ Հաբանդ-Զագեձոր գավառի ուշ միջնադարի և հետագա ժամանակների պատմության քառուղիներում: Ուրեմն վերը նշված հավաստի տեղեկությունների հենքի վրա մերժելի պետք է համարել Գորիսի պատմությունը հեղինակած դոցենտ Ս. Հախվերդյանի այն տեսադրույթը, թե իբր «…Գորիսի Մելիք-Օհանը իր իրավունքները վերահաստատել է Իբրահիմի հոր՝ Փանահ խանի մոտ»[1]:

Ս. Հախվերդյանի առաջ քաշած դրույթը քննություն չի բռնում մեր հետևյալ փաստարկներով: Նախ՝ Օհանի՝ նախքան Արցախի Չանախչի գյուղում հանգրվանելը և մելիքական տիտղոս կրելու իրողությունը չի փաստվում մատենագրական ոչ մի սկզբնաղբյուրով և վիմական արձանագրությամբ: Երկրորդ՝ եթե մի պահ ընդունենք, որ Օհանը վերահաստատել է իր տոհմի՝ հնուց եկող մելիքական իրավունքները, ապա նա մելիքական տիտղոսը պետք է որ ձեռք բերած լիներ ժառանգական իրավունքով[2]: Ըստ այդմ՝ նախ՝ պետք է մելիք լիներ տոհմի նահապետ Մկրտիչը, այնուհետև՝ որդին՝ Ղազարը, սրա որդին՝ Լալան, և ապա՝ վերջինիս որդի Բաղրը (Օհանի հայրը): Մինչդեռ վերջիններիս արձանագիր տապանաքարերին իսպառ բացակայում է պատվավոր **մելիք** բառը, ուստի միանգամայն ակներև է, որ Օհանը ոչ թե վերահաստատել է իր մելիքական իրավունքները, ինչպես սխալմամբ կարծում է Ս. Հախվերդյանը, այլ նոր է ստացել մելիքական տիտղոս՝ համարվելով մի նոր մելիքության հիմնադիր:

Վերադառնանք, սակայն, Մեծ Մելիք-Օհանի հետագա գործունեությանը: Այսպես, մելիքական տիտղոս ստացած Օհանը վերադառնում է Արցախից և իր ժողովրդով նախապես բնակություն հաստատում Ծակերի ձորում[3]: Մելիք-Օհանի՝ պատմական և հնամենի Գորիս-Կյորեսում չվերահաստատվելը ամենայն հավանականությամբ պայմանավորված էր հետևյալ գործոններով: Նախ՝ վաչկատուն թերեքեմեների ասպատակության

[1] **Հախվերդյան Ս.**, նշվ. աշխ., էջ 162:
[2] Տե՛ս **Բարխուտարեանց Ս.**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ Զ:
[3] Տե՛ս **Լալայեան Ե.**, Զանգեզուր, էջ 9, տե՛ս նաև **Լիսիցյան Ս.**, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 59:

ժամանակ կոտորածից մազապուրծ համագյուղացիների մի որոշ մասը տակավին ապաստանել էր Ծակերի ձորում, երկրորդ՝ հայրենի գյուղի՝ պաշտպանության համար անբարենպաստ դիրքի պատճառով: Մելիք-Օհանի՝ Ծակերի ձորում նախապես բնակություն հաստատելը վկայում է նրա կողմից ձորի հյուսիսային մասում՝ Կամի ձորակում, Շոր՝ ջուր վտակի աջ ափին, իր և ծնողների, մասնավորապես հոր՝ Բաղրի հիշատակին կառուցած ոչ մեծ բազիլիկ եկեղեցու[1] բարավորի հետևյալ արձանագրությունը.

**«ՅԻՇԱՏԱԿ Է † ԵԿԵՂԵՑԻՍ ՄԷԼԻՔ/ՈՀԱՆԻՆ ԵՒ ԻՒՐ /ԾՆՈՂԱՑՆ ՊԱՂԲՐ/ԻՆ. ԹՎԻՆ: ՌՄԺԴ: (1765)»**[2]:

**Ծակերի ձորում Մեծ Մելիք-Օհանի կառուցած եկեղեցու շինարարական արձանագրությունը**

Այս իրողությունները հավաստվում են Ա. Բակունցի «Կյորես» վիպակում տեղ գտած արժեքավոր հետևյալ տեղեկությամբ. «Վաղ ժամանակ Շենում՝ հին Կյորեսում (Նոր կամ Ներքին Գորիսը – *Գ. Ս.*), ապրել է մի մարդ, անունն Օհան: Այն ժամանակ Շենն այժմվա ձորերում չէր, այլ ավելի հյուսիս, այնտեղ, ուր ձորի մեջ (իմա՝ Ծակերի ձորում – *Գ. Ս.*) երևում է մի կոտրած վանք, որի ճակատաքարին դեռևս կարդացվում է.

---

[1] Եկեղեցին գտնվելով Ծակերի ձորի Կամի ձորակում՝ տեղի բնակիչներին հայտնի է եղել նաև «Կամի վանք» անունով (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1545, թ. 63): 2012 թ. նոյեմբերին մեր այցելության ժամանակ եկեղեցին գտնվում էր ամբողջովին ավեր վիճակում:

[2] **Լալայեան Ե.**, Զանգեզուր, էջ 30: Հմմտ. Դիվան հայ վիմագրության: Պրակ II: Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ: Կազմեց՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1960, էջ 80: ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1426, թ. 24-ի շրջերես:

«…Թիւ ՌԺԴ (1565) … Ես Մելիք Էգան կառու(ցի)…»[1]: Այս ուշարժան հիշատակումից հետո Ա. Բակունցը էջատակի ծանթագրության մեջ հավելում և որոշակիորեն տեղորոշում է նաև մատնանշած ձորը. «Ղաթրինի ձորից հյուսիս, երրորդ ձորում, որտեղ մնում են անհայտ գյուղի քարայրները և կոտրած վանքը…»[2]: Հետևելով նշված տեղորոշմանը՝ դժվար չէ նկատել, որ բնակավայրի առավել հավանական տեղը կարող է համադրվել Ղաթրինի ձորից հյուսիս՝ Չոփչուն ձորի, այնուհետև՝ Թանգուն ձորին հաջորդող Ծակերի ձորի լքյալ գյուղատեղիի և Մեծ Մելիք-Օհանի կառուցած եկեղեցու հետ, որը «Կյորես» վիպակը գրելու ժամանակ (1935 թ.) արդեն իսկ գտնվում էր խարխուլ վիճակում: Այսպիսով՝ ակնհայտ է, որ Ա. Բակունցի մեջբերած արձանագրությունը վերաբերում է Մեծ Մելիք-Օհանին և նրա կողմից Ծակերի ձորում իր և ծնողների, մասնավորապես՝ հոր՝ Բաղրի հիշատակին կառուցած եկեղեցուն: Ինչ վերաբերում է *Էգան* անձնանվանը, ապա նկատենք, որ խոսքն այստեղ Մեծ Մելիք-Օհանի մասին է: Նախընթացում արդեն անդրադարձանք Հովհաննես անձնանվան գրության տարբերակներին, ուստի այստեղ վկայաբերենք միայն Ռաֆֆու «Դավիթ-բեկ» վեպում տված այն հստակ պարզաբանումը, որ «Ավան, Եգան Օհան բառերը Հովհաննես հատուկ անվան աղճատվածներն են սյունեցիների բարբառում»[3]: Ցավոք, Ա. Բակունցի՝ եկեղեցու բարավորի արձանագրության ոչ ճշգրիտ և էական բացթողումներով արտագրությունից թվականի **Ռ** տառից հետո դուրս է մնացել **Մ** տառը, ինչի հետևանքով 1765-ը դարձել է 1565:

Արդ, հանրագումարի բերելով վերը նշված աղբյուրագիտական արժանահավատ տեղեկությունները, հանգում ենք հետևյալ եզրակացության. Մելիք-Շահնազար Բ-ի միջնորդությամբ Փանահ Ալի խանից մելիքական տիտղոս ստացած Օհանը Արցախից վերադառնալուց հետո, վաչկատուն ցեղերի հետագա

[1] **Բակունց Ա.**, Կյորես, Ընտրանի, Երևան, 2009, էջ 384:
[2] Նույն տեղում:
[3] **Ռաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1963, էջ 267:

ասպատակություններին դիմագրավելու նպատակով նախապես ապավինել է բնական պաշտպանական հնարավորություններով ավելի հարմար վայրին՝ Ծակերի ձորին: Այդ է փաստում միջնադարյան Հայաստանում նոր բնակավայրերի հիմնադրման սկզբունքը, երբ բնակչության համար ստեղծված անապահով վիճակն իշխանական տոհմերի առաջնորդներին հարկադրել է թողնել իրենց երբեմնի բարեկարգ բնակավայրերը և վերաբնակվել ապահով լեռնավայրերում՝ կիրճերի, ժայռածերպերի ու ձորալանջերի բնական քարայր-ապաստարաններում կամ անհրաժեշտության դեպքում ստեղծել թաքստոց-ամրոցներ[1]:

Մելիք-Օհանը չհիմնավորվեց Ծակերի ձորում: Որոշ ժամանակ անց, երբ Զագեձորի հովտին այլևս չէին սպառնում թերեքեմե վաչկատուն ցեղերի ասպատակությունները, Մելիք-Օհանն իր և ծնողների հիշատակին եկեղեցի կառուցելուց հետո՝ որոշ ժամանակ անց (թերևս 1760-ական թվականների վերջերին), իր ժողովրդով մշտական բնակության վայր է ընտրում Զագեձորի հովտի Լաստի խութ լեռան հյուսիսային լանջերն ակոսող ձորամիջում նախկինում գոյություն ունեցած բնակատեղին և հիմնում Նոր կամ Ներքին Գորիս (Ներքին Շեն) գյուղը և այն դարձնում նորահաստատ մելիքության գլխավոր նստոց-կենտրոն: Ինչպես ասվում է Հակոբ քհն. Տեր-Մինասյանի ինքնագիր «Հիշատակարան»-ում, «Թէ որ թվում, որ ժամանակ ինձ յայտնի չէ, Ծակերին ծորիցը փոխւում են այժմեան Գորիս գիւղը, է հարկէ Նոր գիւղ քցում, այդ յայտնի է այս գիւղի Ս. Հռիփսիմէ եկեղեցւոյ կանգնեցնելուց»[2]: Այդ է փաստում նաև Մանուչար բեկ Մելիք-Հուսեինյանի ներկայացրած պատումը, համաձայն որի՝ Մելիք-Օհանը «...բնակութիւն է հաստատում նախ «Ծակերի ձորում», բայց յետոյ հիմնարկում է Նոր-Գորիս գիւղը[3] և այնտեղ տեղափոխւում»[1]:

---

[1] Տե՛ս **Գրիգորյան Գ.**, Գյուղական նոր բնակավայրերի հիմնումն ու բնակչության վերաբնակեցումը միջնադարյան Հայաստանում (Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր. Հայկական լեռնաշխարհը հայ էթնոսի բնօրրան: Հայագիտական գիտաժողով (զեկուցումների հիմնադրույթներ), Երևան, 2004, էջ 39-40:

[2] ՀԱԱ, ֆ. 798, ց. 1, գ. 1220, թ. 137:

[3] Տարաժամանակյա աղբյուրները վկայում են այն մասին, որ տակավին XVIII դ. վերջերից նորահիմն Գորիս գյուղից որոշ ընտանիքներ հետզհետե վերահաստատվել են պապենական Գորայք-Գորիսում և որպես նվիրական վայր վերահիմնարկել ավեր-

**Գորիս-Կյորես գյուղի համայնապատկերը. XIX դարասկիզբ:**
**Հեղ.՝ Է. Ռեկլյու**

**Գորիս-Կյորես գյուղի համայնապատկերը. 1890 թ.:**
**Հեղ.՝ ֆրանսիացի ազգագրագետ Բ. Շանթր**

Վերոբերյալ դեպքերի վավերականությունը հավաստվում է տեղագիր-հեղինակների հիշատակումներով[2]: Այսպես, 1841 թ.

---

ված հին գյուղը: Ասպատակության հետևանքով քարուքանդ արված Զագեձորի հովտի հնարմատ գյուղը դժվարին պայմաններում բռնում է վերականգնման ուղին: Արդյունքում համանուն երկու բնակավայրերն իրարից տարբերելու համար տեղի բնակիչները պատմական գյուղը կոչել են Հին Գորիս կամ բարբառային ձևով՝ *Յէրի Շէն* (Վերին Շեն)՝ ի տարբերություն Լաստի խութ լեռան ստորոտում հիմնված Գորիսի, որին համապատասխանաբար տրվել են Նոր կամ Ներքին Գորիս՝ Ներքին Շեն անվանումները:

[1] **Լալայեան Ե.**, Զանգեզուր, էջ 9:

[2] Ժամանակագրական կարգով վկայաբերենք Սյունիքում, այդ թվում նաև Վարաբակնի հովտում շրջագայած ճանապարհորդ-տեղագիրների հաղորդումները: Այսպես՝ ժամանակի ճանաչված մտավորականներից Սիմեոն Շահվերդյանցը, ով հետագայում դասավանդել է Գորիսի պետական (արքունի) ուսումնարանում, «Նոր-Դար»-ի 1887 թ. հոկտեմբերի 16-ի համարում տպագրած «Ճանապարհորդական

նկատողութիւններ» վերտառությամբ փաստառատ ուղեգրական նոթերում գրում է. «Գեօրեսը երեք կողմից բոլորովին պատած է բաւականին բարձր սարերով... Հիւսիսային կողմը գտնվում է միւսներից բարձր մի սար (Եփնոց լեռ - *Գ. Ս.*), որ կարծես գիւղը պաշտպանում է հիւսիսային սառնամանիքներից, բայց ինքն ևս պակաս ցրտեր չէ ուղարկում դէպի գիւղ: **Այս սարի ստորոտին մօտիկ, գետակի վերայ գտնվում է Հին Գեօրեսը, որտեղից բնակիչները տեղափոխուել և հիմնել են այժմեան Գեօրեսը** (ընդգծումը մերն է՝ *Գ. Ս.*), իսկ հին տեղը գտնվում են գիւղացիների ձմեռուայ գոմերը» («Մշակ», Թիֆլիս, 1902, յունվարի 25, №17):

Ս. վրդ. Զալալյանցից շուրջ 47 տարի անց, 1888 թ. հոկտեմբերի սկզբներին Զագեձորի հովտում շրջագայած Լեոն, որի պրպտող հայացքից չի վրիպել Հաբանդ գավառի հինավուրց ու նշանավոր Գորայք-Գորիսի տեղադրությունը, ուղեգրական նոթերում գրում է. «Գորիս գնալուց երեք օր յետոյ մենք ձի նստեցինք ու գնացինք Հին-Գորիս անունով տեղը, որ գտնվում է այժմեան Գորիսից դէպի արևմուտք, այն լեռնային բարձրութեան մօտ, որ... արևմուտքից փակում է Գորիսի ձորը: …**Հին ժամանակներն այստեղ է եղել բուն գիւղը, որ չը գիտեմ, թէ ինչու է թողել այս տեղը, գնացել է տեղաւորուել ներքևում, բիզ-բիզ քարերի տակ** (ընդգծումը մերն է՝ *Գ. Ս.*)» (**Լէօ**, Իմ յիշատակարանը, (տեղեկութիւններ մեր սարերից ու ձորերից): Սիւնիքից մի անկիւն, Շուշի, 1890, էջ 76-77):

Տեղագրական բնույթի մյուս աղբյուրը Ղ. Ալիշանի «Սիսական» մեծարժեք աշխատությունն է, որում հեղինակը Զագեձոր բերդի տեղադրության առնչությամբ որոշակիորեն մատնանշում է, որ բերդը գտնվել է Հին Գորիսի սահմանին, նոր ավանից երեք մղոն հյուսիս արևմուտք: Այդ մասին նա հիշատակում է. «...Զագաձորոյ բերդ... և հաւանելի է լինել ի սահմանս հնոյն Կորէսի, որ կայ առ եզերբ ջրոյն յաջմէն իբր երիւք մղոնօք ի Մ.[յարեւմուտս] Հս.[հիւսիսոյ] նորոյ աւանին...» (**Ալիշան Ղ.**, Սիսական: Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 261): Ղ. Ալիշանը Զագեձոր բերդի տեղադրությունից անմիջապես հետո անդրադառնում է նաև Զագեձորի հովտի երկու Գորիսների տեղադրության հարցին և ընդգծում, որ Գորայք նախնական ձևից առաջ եկած «Կորէս» կամ «Գորիս» անվամբ բնակավայրերից «...մին կոչի Հին և է վերոյ նշանակեալն (իմա՝ «հնոյն Կորէս»-ը - *Գ. Ս.*), ի ստորոտ լերին ի բարեդիր և անուշօդ վայրի. այլ իբրու ոչ ըստ բաւականին անքոյթ՝ լքեալ ի բնակչացս՝ ոչ չգիտեմ երբ: Երկրորդն և այժմ գլխաւոր աւան, նաև քաղաքաւան բովանդակ գաւառին, Կորէս կամ Կորուս կամ Գորիս, որ և Զանկեազօր, երկու մղոնաւ կամ աւելի յարեւելից հարաւոյ կայ առաջնոյն, երկոսին ափունս կարկաջահոս և սրընթաց Զագեձորոյն...» (նույն տեղում): Տեղագրությունն ու նկարագրությունը միանգամայն ընկալելի է: Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Ղ. Ալիշանի «Սիսական»-ը գրելու ժամանակաշրջանում (XIX դարի 80-ական թվականների վերջեր) «Կորէս» կամ Գորիս «քաղաքաւանն» արդեն ներառում էր Լաստի խութ լեռան հյուսիսային լանջերն ակոսող ձորամիջում գտնվող Գորիս գյուղն ու տափարակում 1870 թ. հիմնված գավառակենտրոն Գորիսը: Ասվածի խոսուն վկայությունն է Գորիսի ծխատեր քահանաներ Հակոբ քին. Տեր-Հակոբյանի, Գարեգին քին. Տեր-Մինասյանի և Դանիել քին. Տեր-Դավթյանի՝ «Գաւառ» շաբաթաթերթին 1910 թ. մարտի 29-ի հղած նամակում 1883 թ. իրադարձություններին վերա-

ամռանը վիմագրական նյութեր հավաքելու նպատակով Գորիս գյուղ այցելած Սանահինի վանքի վանահայր երախտաշատ Սարգիս վրդ. Ջալալյանցն իր «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» ճամփորդական-տեղագրական մեծարժեք աշխատության «Կորիս» վերտառությամբ ենթագլխում գրում է. «Բնակիչք տեղւոյս յերկիւղէ հանապազօրեայ արշաւանաց ի զանազան թշնամեաց՝ ի վաղուց անտի լքեալ թողին զգիւղն Կորիս, որ ի ստորոտ լերին յարևմուտս հիւսիսոյ ի պատուական տեղւոջ, և

---

բերող հետևյալ տեղեկությունը. «...Գօրիս աւանը, որի տակ հասկացւում էր այժմւայ քաղաքամասը և գիւղամասը...» («Գաւառ», Գօրիս, 1910, ապրիլի 4, № 14):

Ավելորդ չենք համարում վկայաբերել նաև Արցախի թեմի առաջնորդ Գրիգոր արքեպս. Սագինյանցի՝ 1886 թ. հուլիսի սկզբներին պաշտոնական գործերով Տաթևի վանք մեկնելու ժամանակ նրա ուղեկցությամբ Զանգեզուրի գավառում ճանապարհորդած անվանի բանահավաք, մանկավարժ, հոգևոր-հասարակական գործիչ Եղիշե քին. Գեղամյանցի (Հայկունի)՝ «Ուղեգնացական ակնարկներ» վերտառությամբ նոթերի տեղեկությունները, որոնք լույս են սփռում խնդրո առարկա հարցի վրա: Այսպես՝ Շուշիից հուլիսի 5-ին հասնելով գավառակենտրոն Գորիս, Տաթևի վանք մեկնելուց առաջ, Գորիս գյուղի իր տանը նրանց հյուրընկալել և գիշերակացով ապահովել է մեծահարգ Մանուչար բեկ Մելիք-Հուսեինյանը: Նա Եղիշե քին. Գեղամյանցի հետ զրույցում փաստագրական կարևոր տեղեկություններ է հաղորդել գյուղի պատմության մասին, որոնց հիման վրա վերջինս ուղեգրական նոթերում արձանագրել է հետևյալը. «**Գեօրիս գիւղը առաջ հովտի աւելի բարձրումն էր գտնվում և ունէր 700 տուն: Նրա աւերակները հիմայ էլ կան** (ընդգծումը մերն է՝ *Գ. Ս.*): Այժմեան գիւղի հանդէպ, գետի աջ ափի վրայ, 1869 թուից մի քաղաք (Գեօրիս) է ձգուած, որ ողջ Զանգեազօրի գաւառական քաղաքն է...» (**Հայկունի** [**Եղիշե ավ. քին. Գեղամյանց**], Ուղեգնացական ակնարկներ (II), «Մեղու Հայաստանի», Թիֆլիզ, 1886, օգոստոսի 10, № 45):

Հիշատակենք նաև հետևյալ վավերական փաստը, ինչն ամբողջացնում է մեր եզրահանգումները: Հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ, ծնունդով (ծնվ.՝ 1878 թ.) Նոր կամ Ներքին Գորիս գյուղից Հովհաննես Պարոնյանի (Յապոն) հուշերում ասվում է. «Ձագաձորը հայ աշխարհի այն բախտաւոր ու բացառիկ պատառիկներից է, որ սկզբից եղել ու մնում է զուտ հայկական: Հովիտի յատակը քերող Գորիս գետի աջ ու ձախ ափերին վերից վար շարուած են Բուռուն, Հին (կամ Վէրին) Գորիս, Ներքին (կամ Նոր) Գորիս գիւղերը, Գորիս քաղաքը ու Քարահունջ գիւղը, բոլորն էլ հայկաշէն ու հայաբնակ: Սրանցից Հին ու Նոր Գորիսները հովիտի ամենահին աւաններն են, իսկ սրանցից **Հին Գորիսի պատմութիւնը գնում հասնում է Միւնեաց Աշխարհի շատ հեռու շրջանները** (ընդգծումը մերն է՝ *Գ. Ս.*)» (**Յապոնի** (**Յովհաննէս Պարոնեան**) յուշերը: Գրեց՝ **Տէրունի Յ.** [**Հակոբ Տեր-Պողոսյան**], «Հայրենիք», Պոսթըն, 1940, ԺԹ տարի, դեկտեմբեր, № 2, էջ 114):

յօժարեցան բնակիլ աստանօր վասն ամրութեանն»[1]: Ընդսմին՝ Մելիք-Օհանին պետք է վերագրել ոչ միայն Հաբանդ գավառում Ղարաբաղի խանությանը ենթակա մի նոր մելիքության, այլ նաև մելիքության նստավայր կենտրոնի՝ Նոր Գորիսի հիմնադրի իրավունքը:

Մեծ Մելիք-Օհանը ենթարկվում էր Փանահ Ալի խանին և իր գործունեությամբ հաշվետու էր նրան: Որպես մի նոր մելիքության հիմնադիր՝ նա օժտված էր մելիքական իրավունքներով և իրականացրել է բոլոր այն գործառույթները, որոնք սահմանված էին ինչպես Արցախի, այնպես էլ Սյունիքի մելիքների համար, այն է՝ հարկահավաքում, դատավարություն, կարգի պահպանում, զինվորագրում և այլն[2]: Որպես կանոն՝ մելիքը կրում էր իշխանության խորհրդանիշ, ունեցել է իր կնիքը՝ կեռ սուր, վրան գրված «Քսի [Քրիստոսի] ծառայ մելիք... (անունը)»[3]: Մելիքն իրեն ենթակա յուրաքանչյուր գյուղում նշանակում էր

---

[1] **Ջալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 309: Աշխարհաբար թարգմանությամբ. «Տեղի բնակիչները, զանազան թշնամիների մշտական արշավանքների վախից, վաղուց լքեցին [հին] Կորիս գյուղը, որ [գտնվում է այստեղից] հյուսիս արևմուտք, լեռան ստորոտի մի պատվական տեղում և [այս վայրի] ամրության պատճառով, համաձայնեցին բնակվել այստեղ» (**Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մաս Ա, Բ: Գրաբարից աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ **Ս. Գրիգորյանի**, Երևան, 2016, էջ 491):

[2] Բնակչությունը մելիքի նկատմամբ կատարում էր հետևյալ պարտավորությունները. յուրաքանչյուր տնից մեկ ոսկի՝ խանին ուղարկելու համար, տասանորդ՝ հացահատիկից և խոտից, մի-մի բեռ փայտ, որը պետք է բերվեր սեփական ձիով և ջորիով, յուրաքանչյուր երեք ընտանիքից՝ մի գութան մելիքի հողերից մի օրավար վարելու համար: Գյուղացիները պարտավոր էին մելիքի հողերը վարել, ցանել, հնձել, կրել և այլն, գյուղացիներից մեկ տարով մելիքը ստանում էր վարձած ձիապան, խոհարար, ծառա և աղախին: Կանայք պետք է լվանային, զզեին և մանեին մելիքի բուրդը, ինչպես նաև հավաքեին նրա այգիների միրգը: Նավասարդին (Նոր տարի) յուրաքանչյուր տան մեծը մի խնձորի մեջ արծաթ, երբեմն էլ ոսկի դրամ ցցած շնորհավորում էր մելիքի տոնը՝ բերելով և մի կուլա գինի և մի շիշ օղի: Հարսանիքի թույլտվություն խնդրելու համար՝ նախօրյակին նորափեսայի հայրը քավորի հետ միասին մելիքին տանում էր մի կուժ գինի, մի շիշ օղի և եզան սուկին (տե՛ս **Լալայեան Ե.**, Զանգեզուր, էջ 15, տե՛ս նաև **Ширакуни Н.**, Зангезурский уездъ Елизаветпольской губернии (гл. VII, Бывшие армянские мелики). Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XXXIV, Тифлис, 1904, отд. I, с. 202-204, տե՛ս նաև **Լիսիցյան Ս.**, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 64):

[3] **Լալայեան Ե.**, Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 252:

տանուտեր: Սա կատարում էր մելիքի հրամանները, իր զգիրի հետ հավաքում էր հարկը, կազմակերպում էր փոքրիկ դատեր և այլն[1]: Մելիքը խանի նկատմամբ ունեցել է հետևյալ պարտավորությունները. «1. Շահի կամ խանի պատերազմ գնացած միջոցին, օգնութեան գնալ, զինելով իրենց վիճակի իւրաքանչիւր տնից մի մարդ: 2. Իւրաքանչիւր տնից մի ոսկի (երեք ռուբլի) առնելով՝ ուղարկել խանին, որպէս շահին հասանելի հարկ»[2]:

Մեծ Մելիք-Օհանն անտարակույս եղել է քաջակորով անձնավորություն և աչքի ընկնող դեր է խաղացել Սյունիքի հասարակական-քաղաքական և հոգևոր կյանքում: Նրա ձեռնարկած շինարարական-կառուցողական աշխատանքները նախ սկսվում են մելիքական նստոցի՝ ապարանքի (ամարաթ) կառուցմամբ, որը պետք է լիներ ինչպես հարկն է լավ պաշտպանված: Հայտնի է, որ մելիքական ապարանքները սովորաբար շինվում էին հարմարավետ վայրերում՝ բնակավայրի կենտրոնական մասում, կոպտատաշ և սրբատաշ քարից, բաղկացած մի քանի թաղակապ քարայր «դարադամներից» (գլխատուն, մեծ տուն): Ներկայումս Գորիս գյուղի (Նոր կամ Ներքին Գորիս) կենտրոնում՝ Ս. Հռիփսիմե եկեղեցուց փոքր-ինչ հեռու, գտնվում է Մեծ Մելիք-Օհանի կողմից հիմնարկված, հետագայում մելիք կարգված նրա որդիներից մեկի՝ Հուսեինի անունով հայտնի Մելիք-Հուսեինյանների մելիքական երկհարկ ապարանքի ավերակը[3]:

---

[1] Տե՛ս **Լալայեան Ե.**, Զանգեզուր, էջ 15:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1545, թ. 32: «Պատմական հուշարձանների պահպանության կոմիտե»-ի (այսուհետ՝ ՊՀՊԿ)-ի Գորիսի շրջանային հրահանգիչ Գ. Բաղրամյանի 1939 թ. հեղինակած «Տեղեկություններ Գորիսի շրջանի հին հուշարձանների մասին» հաշվետվության մեջ արդեն իսկ կիսաքանդ ապարանքը նկարագրվում է. «Գտնվում է գյուղի մեջի մահլում՝ ուղիղ եկեղեցու գլխին, դեպի հյուսիս-արևմուտք, Զագեձոր բերդի ժայռերի տակ: Այս բնակարանն ունի ընդհանուր մեծ մուտք, որի կողքին շինված է մելիքի դիվանատունը, որտեղից մելիքը դուրս է եկել և հրապարակավ դատեր ու վճիռներ կայացրել: Դիվանատունը կիսավեր է, մնում է մի պատ, որի վրա երևում է ծեփի հետքը: Դիվանատան մոտի մուտքը տանում է մի թաղակապ միջանցք, որի հյուսիսային կողմում գտնվում է մելիքի անձնական սենյակը, խիստ ապահով, ամուր և քարե սիրուն կամարով, այս հոյակապ սենյակի առաջին պատը, դռներն ու պատուհանը ավերված են, սենյակը ծեփված է եղել, այժմ թափված է: Մելիքի սենյակի հյուսիսային կողմում գտնվում է գեղեցիկ բուխարին՝ ճարտարապետական գեղեցիկ քանդակված

Մեծ Մելիք-Օհանը ոչ միայն հայրենասեր ու քաջարի զինվորական էր, այլև ազգային ավանդույթների կրող ու շարունակող: Նրա շինարարական գործունեության հաջորդ ձեռնարկը եկեղեցաշինությունն էր: «Խաչերի ձոր» թաղում՝ փոքրիկ բլրալանջի վրա, 1776 թ. նա կառուցում է Ս. Հռիփսիմե եկեղեցին[1]:

---

բուխարու շուրջքարով... ննջարանի (նաև առանձնասենյակի) հյուսիսային կողմը գտնվում է դարադամը, որը մի մեծ սենյակ է, մեջին չորս քարե սյուներ, որոնց վրա է կառուցվել վերնաշենքը՝ ամբողջովին փայտից: Սենյակն ու քար սյուներն էլ այժմ անվթար են, քանդված է միայն առաջահայաց պատը, դուռը և քարերը (սրբատաշ) տարված են» (ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 368, թ. 5-6):

[1] Մեզ հայտնի առաջին աղբյուրը, որտեղ եկեղեցին նշված է Ս. Հռիփսիմե, եկեղեցու 1851 թ. վերաբերող ծխական մատյանն է. «Չափաբերական մատեան տուեալ ի հոգեւոր Կառավարութենէ Հայոց Տաթևու սուրբ Հռիփսիմէ եկեղեցւոյն Կորիս Գեղջ, յաղագս գրելոյ, ի սմին զԾնեալս, զՊսակեալս, զՆնջեցեալս: Յընթացս 1851 ամի» (ՀԱԱ, ֆ. 47, ց. 1, գ. 693, թ. 2): Այդ անվամբ են հիշատակում նաև տեղագիր-հեղինակներից Ղ. Ալիշանն (տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսական: Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 262) ու Ս. Էփրիկյանը (տե՛ս **Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, գիրք Ա, Վենետիկ, 1903-1905, էջ 525), ավելի ուշ նաև՝ Հակոբ քհն. Տեր-Մինասյանն իր տոհմի մասին 1919 թ. հունվարին հեղինակած «Հիշատակարան»-ում (տե՛ս ՀԱԱ, ֆ. 798, ց. 1, գ. 1220, թ. 137) և 1926 թ.՝ Սյունյաց թեմի և Տաթևի վանքի առաջնորդ Արտակ եպս. Սմբատյանցը (տե՛ս Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Գ, Արտակ եպիսկոպոս Սմբատյանց (Տավուշեցի), հոգևոր, գրական, պատմաբանասիրական գործունեությունը և գնդակահարությունը (1876-1937 թթ.), կազմեց՝ **Ս. Բեհբության**, Երևան, 1997, էջ 310:

Եկեղեցին իր ճարտարապետական ոճով միանավ բազիլիկ է: Կառույցի հորինվածքի և շինարվեստի վերաբերյալ թերևս առաջին հիշատակությունը թողել է 1841 թ. ամռանը Գորիս գյուղ (Նոր կամ Ներքին Գորիս) այցելած Ս. վրդ. Զալալյանցը. «Ունին զսագաշէն եկեղեցի (թաղածածկ - *Գ. Մ.*), կառուցեալ յանհարթ և ի կոփածոյ քարանց...» (**Զալալեանց Ս.**, նշվ. աշխ., մասն Բ, էջ 309): Եկեղեցու մասին կարճ տեղեկություն է պահպանված նաև Ե. Լալայանի մոտ. «Գիւղի կենդրոնում գտնւում է հին, հասարակ եկեղեցին...» (**Լալայեան Ե.**, Զանգեզուր, էջ 27): Ա. Բակունցը եկեղեցին հիշատակում է նաև «Կանաչ եկեղեցի» անվամբ. «Կյորեսն ուներ իր սուրբերը՝ Կանաչ եկեղեցի, սուրբ Մարտիրոս... Միայն Կանաչ եկեղեցին ուներ ժայռի մեջ փորած սանդուղքներ, որ իբրև թե յոթ տարի փորել էր մի մենակյաց...» (**Բակունց Ա.**, Կյորես, Ընտրանի, էջ 371):

ՊՀՊԿ-ի՝ 1946 թ. օգոստոսին Գորիս կազմակերպած գիտարշավի ղեկավար Գ. Սարգսյանի հաշվետվությունում եկեղեցու հորինվածքի մասին ասվում է. «Եկեղեցի Ս. Հռիփսիմե. գյուղի մեջ, միանավ բազիլիկայի ձևով, երկարավուն քառանկյուն սրահ, արևելքից լայն աբսիդա՝ բեմով: Թաղակապ տանիքով, մեջտեղից գոտկված մի կամարով: Գլխավոր մուտքն արևմուտքից, մի փոքր դուռ հարավային պատի արևմտյան կեսում: Հյուսիսային պատի մեջ, աբսիդի մոտ, մի փոքր դուռ բացվում է մի երկարավուն քառանկյուն թաղակապ գավթի մեջ, որի դրսի դուռը հյուսիսային պատի մեջ է: Այս գավիթը կամ խորանը եկեղեցու հյուսիսային պատի 2/3-ի երկարությամբ է: Մեկական մեծ լուսամուտներ արևմտյան և հարավային պա-

Հարավային մուտքի բարավորին պահպանվել է փոքրաթիվ կցագրերով, պարզ ոճով հետևյալ արձանագրությունը.

**«ՅԻՇԱՏԼԱԿ Է/ԵԿԵՂԵՑԻՍ ՊԱՂ/ՐՐԻ ՈՐԴԻ ՍԷԼԻՔ/ՈՀԱՆԻՆ:**
**ԹՎ[Ի]Ն ՌՍԻԵ (1776)»**[1]:

**Ս. Հռիփսիմե եկեղեցու շինարարական արձանագրությունը**

---

տերում, մի փոքր լուսամուտ հյուսիսային պատի մեջ: Շարվածքը կիսամշակ քարից՝ կրաշաղախով» (ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 1426, թ. 23): Խորհրդային կարգերի հաստատումից հետո եկեղեցին ներսից սվաղվել է, քարապատվել է արևմտյան դուռը, իսկ շինությունը վերածվել է «Ավանգարդ» կոլտնտեսության մթերման պահեստի (տե՛ս **Խանզադյան Ս.**, Մատյան եղելությանց, Երևան, 1966, էջ 43):

Եկեղեցին հիմնովին վերանորոգվել է 2009-2013 թթ.՝ «Գորիս-Վիեն» քույր քաղաքների համագործակցության շրջանակում և Փարիզում 2010 թ. հուլիսին ֆրանսահայերի հիմնադրված «Երկիր և մշակույթ» հասարակական-բարեգործական կազմակերպության նախաձեռնությամբ ու ֆինանսավորմամբ (վերականգնող ճարտարապետ՝ Ստեփան Նալբանդյան): Եկեղեցին վերաօծվել է 2012 թ. սեպտեմբերի 29-ին: Սուրբ Խաչն օծվել է ձեռամբ Մուշեղ եպս. Բաբայանի (տե՛ս «Սյունյաց երկիր», Կապան, 2012, հոկտեմբերի 15, № 26):

[1] **Ստեփանյան Գ.**, Գորիս, ԴՀՆ (2006 թ.), տետր № 1, էջ 2: Արձանագրությունը հրատարակվում է առաջին անգամ: Նշենք, որ Գորիս գյուղի (Նոր կամ Ներքին Գորիս) հուշարձանների արձանագրությունները հրատարակած Մ. արքեպս. Տեր-Մովսիսյանի և Ս. Բարխուդարյանի մոտ հիշատակված չեն սույն եկեղեցու կառուցման վերաբերյալ վիմագրական որևէ տեղեկություն: Այդ բացը լրացվեց 2006 թ. հուլիսի 15-ին, երբ տողերիս հեղինակի ղեկավարությամբ և վիմագրության դասախոս Արտակ Գզոյանի մասնակցությամբ՝ Գորիսի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողների հնագիտական և վիմագրագիտական պրակտիկայի ժամանակ ուսանողների ջանադիր աշխատանքի արդյունքում ամբողջությամբ մաքրվեց գոմի վերածված եկեղեցին, բացվեց քարապատված արևմտյան դուռը, սվաղի հաստ շերտից մասամբ մաքրվեցին նաև պատերն ու մույթերը: Հարավային մուտքի բարավորի սվաղը մաքրելու ժամանակ բացվեց եկեղեցու հիմնման մինչ այդ անհայտ մնացած պարզ, փոքրաթիվ կցագրերով քառատող արձանագրությունը:

**Գորիս-Կյորես գյուղ. Ս. Հռիփսիմե եկեղեցի (1776 թ.)**

* * *

Մեծ Մելիք-Օհանը մահացել է 1779 թ.: Գորիս գյուղի արևմտյան եզրին, լեռնալանջին գտնվող Մելիք-Հուսեինյանների տոհմական՝ «Մելիքների» անվամբ դամբարան-մատուռին (XVIII դ.) հարող Խոջա Բաղուն թաղի[1] հին գերեզմանատան հարավային հատվածում (դամբարան-մատուռից ավելի քան 80 մ հեռավորության վրա) ցայսօր պահպանված եռատող, փոքրաթիվ կցագրերով, մակերեսի ամբողջ երկայնքով ազնվականին վայել նախասիրությունների և կենցաղի քանդակներով հարդարված ու նուրբ նախշերով եզրափակված Մեծ Մելիք-Օհանի տապանաքարին պարզ ոճով և դյուրընթեռնելի արձանագրված է.

[1] Տե՛ս **Խանզադյան Ս.**, Վիմագրերի աշխարհում, «Սովետական Հայաստան», Երևան, 1980, № 5, էջ 29:

«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՌՆ ՄԵԾԻ/ՄԷԼԻՔ ՈՀԱՆ ԻՇԽԱՆԻ/Ի : ՌՄԻԸ (1779) : ԻՆ ՈՐ ԵՂԵԻ ԹՎԱԿԱՆԻ»



**Մեծ Մելիք-Օհանի տապանաքարի արձանագրության գծապատկերը**

Հիրավի, տապանաքարը բացառիկ ու արժեքավոր է չորս կողմերում արված պատկերազարդումներով: Քանդակազարդող վարպետը տապանաքարի երեսին պատկերել է խաչ, հյուսիսային և հարավային կողմերին պատկերել է ռազմի, որսի և ննջեցյալի կյանքի՝ դրախտային վայելքներին արժանանալու տեսարաններ, արևմտյան կողմում՝ զարդանախշ խաչ, արևելյանում՝ Սուրբ հոգու խորհրդանիշն արտահայտող աղավնակերպ թռչուն՝ կանգնած կենաց ծառի երկու ճյուղերի գագաթին:

**Մեծ Մելիք-Օհանի տապանաքարի հյուսիսային կողմը**

**Տապանաքարի հարավային կողմը**

Տապանաքարի արձանագրության վերծանության քննության առումով կարևոր ենք համարում անդրադառնալ նախորդ ուսումնասիրողների դիտարկումներին և կատարել որոշ սրբագրումներ: Այսպես՝ արձանագրությունն առաջին անգամ ընդօրինակել և վերծանել է վանական պաշտոնական գործերով 1904 թ. հուլիս-օգոստոսին Երևանի թեմի Տաթևի փոխանորդություն այցելած արժանահիշատակ Մեսրոպ վրդ. (հետագայում արքեպիսկոպոս) Տեր-Մովսիսյանը (գիտությանը հայտնի Մեսրոպ Մագիստրոս անուն-տիտղոսով): Ըստ այդմ՝

«**ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԵԾԻ/ՄԵԼԻՔ ՈՀԱՆ ԻՇԽԱՆԻ/Ի ՌՄԻԸ (1779) ՈՐ ԵՂԵԻ ԹՎԱԿԱՆԻ**»[1]:

Սակայն Մ. վրդ. Տեր-Մովսիսյանը բնագրի առաջին տողում բաց է թողել **ԱՌՆ** բառը, իսկ երրորդ տողում թվականին հաջորդող՝ **ԻՆ** տառերը: Մենք դրանում համոզվեցինք, երբ կրկնակի այցելություններով՝ 2012 թ. հունիսի 15-ն և 2019 թ. հունիսի 7-ին հնավայրում կատարած դաշտային հետազոտական աշխատանքների ժամանակ մոտիկից դիտարկեցինք, խնամքով ընթերցեցինք ու վերծանեցինք բարեբախտաբար

[1] **Մեսրոպ Մագիստրոս արքեպ. Տեր Մովսիսեան**, Հայկական երեք մեծ վանքերի Տաթեւի, Հաղարծնի եւ Դաղի եկեղեցիները եւ վանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938, էջ 67:

դեռևս անխաթար և անաղարտ վիճակում գտնվող արձանագրությունը:

Մ. վրդ. Տեր-Մովսիսյանից հետո արձանագրությունը 1935 թ. վերծանել և հրատարակել է նաև Սերո Խանզադյանը: Հավանաբար ձեռքի տակ չունենալով Մ. վրդ. Տեր-Մովսիսյանի ընդօրինակությունը՝ նա, ցավոք, արձանագրությունը նույնպես վերծանել է որոշ աղավաղումներով ու թերի.

«**Այս է տապան առն մեծի Մելիք-Օհան մեծ իշխանին, որ եղև (սպանումը) ՌՄԱ թուականին**»[1]:

Դժվար չէ նկատել, որ Ս. Խանզադյանը արձանագրության մեջ ընդմիջարկել է *սպանումը* բառը (թերևս ցանկացել է մատնանշել, թե իբր Մեծ Մելիք-Օհանը սպանվել է, ինչը չի փաստվում որևէ հավաստի սկզբնաղբյուրով), իսկ թվականի դեպքում, **ՌՄ** տառերից հետո **ԻԸ** տառերի փոխարեն **Մ**-ից հետո գրառել է **Ա** տառը: Ի դեպ՝ նշենք, որ Ս. Խանզադյանը արձանագրության սխալ թվագրումը զետեղել է նաև իր խմբագրությամբ լույս տեսած Վահան Բակունցի՝ Ակսել Բակունցին նվիրված փաստագրական արժեքավոր հուշապատման մեջ[2]: Ավելին, Ս. Խանզադյանը, հակված լինելով Բակունց (Բեգունց) տոհմի ծագումը կապել Մեծ Մելիք-Օհանի տոհմանվան հետ, հիմք ընդունելով միայն այն փաստը, որ չափաբերական մատյանում Ակսել Բակունցի հոր՝ Ստեփանի ազգանունը պապի՝ Օհանի անունով գրանցված է Օհանյան, առանց որևէ փաստագրական հիմքերի շտապել է եզրակացնել, թե իբր. ««Օհանյան» ազգանունը վկայում է, որ Բակունց տոհմը ծագում է Գորիսում հռչակված քաջ Մելիք Օհանից (նահատակվել է 1751 թ.) »[3]: Հատկանշական է, որ արձանագրությունների վերծանման առիթով Ս. Խանզադյանը անկեղծորեն գրել է. «Ինչ խոսք, իմ օրինակածներից շատերը հայտնի են մեր մատենագրությանը: Բայց դրանք էլ ես իմ ձևով եմ կարդացել: Անշուշտ, իմ կատա-

[1] Տե՛ս **Խանզադյան Ս.**, Տեր-Հակոբ Տեր-Մինասյան Գորիսեցու «Հիշատակարանը», էջ 134:

[2] **Բակունց Վ.**, Մեծ հույզերի սերմնացանը, Երևան, 1976, ծան. 2, էջ 3:

[3] Նույն տեղում:

րած գործի մեջ թերացումներ ու սխալներ կլինեն, որ կամովին չեն»[1]:

Մեծ Մելիք-Օհանի տապանաքարի արձանագրությունը ընդօրինակել, վերծանել և հրատարակել է նաև վիմագիր արձանագրություններ հավաքելու նպատակով 1946, ապա 1958 թթ. ամռանը Վարարակնի հովիտ այցելած բազմավաստակ վիմագրագետ-պատմաբան Սեդրակ Բարխուդարյանը[2]՝ «Դիվան հայ վիմագրության» 2-րդ պրակում: Սակայն, պատշաճը հատուցելով վիմագրագետ անվանի գիտնականի՝ տարիներ ի վեր վիմական բնագրերի վերծանման տքնաջան վաստակին, խնդրո առարկա վիմագրի ոչ համարժեք ընթերցումը, անիրական վերծանումը և թեական թվագրումը, տեղիք է տվել հետագա ուսումասիրողների թյուր կռահումներին՝ գլխիվայր շրջելով պատմական իրողությունները, ինչպես ցույց են տալիս ստորև մատնանշած մեր փաստարկները: Եվ եթե չլիներ հարցի կարևորությունը, թերևս չանդրադառնայինք այս խնդրին, սակայն քանի որ այն աղերսվում է Նոր Գորիս գյուղի հիմնադրման և հատկապես Հաբանդ-Զագաձոր գավառում մի նոր մելիքական տոհմի հաստատման ժամանակի և հարակից հարցերի պարզաբանման խնդրին, ուստի հարկ ենք համարում այն հիմնական գծերով քննության առնել:

Այսպես՝ Ս. Բարխուդարյանի մոտ արձանագրությունը տեղ է գտել հետևյալ վերծանությամբ.

**«ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՌՆ ՄԵԾԻՆ ՄԵԼԻՔ ՕՀԱՆ ՄԱԼԽԱՍԻՆ ՈՒ ՄԻՐԻՆ, ՈՐ ԵՂԵՒ ԹՎԱԿԱՆ ԱՄԻՆ: ՌԻԱ : (1572)»**[3]:

---

[1] **Խանզադյան Ս.**, Վիմագրերի աշխարհում, «Սովետական Հայաստան», Երևան, 1980, N 5, էջ 28:

[2] Ի դեպ՝ Ս. Բարխուդարյանի՝ 1958 թ. գլխավորած գիտարշավախմբի լուսանկարիչն էր հայ դերասան, բեմադրիչ և հնագետ-լուսանկարիչ Արամ Վրույրի (Մաքաշյան) կրտսեր որդին՝ ՀՍՍՀ վաստակավոր դերասան Արտաշես Վրույրը, որի կատարած լուսագրումները հրատարակվել են «Դիվան հայ վիմագրության» հատորի II, III և V պրակներում (տե՛ս Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 6, տե՛ս նաև **Փաշայան Ռ.**, Արամ և Արտաշես Վրույրներ, Երևան, 1989):

[3] Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 80:

Արձանագրության թվագրման առումով Ս. Բարխուդարյանը գրում է. «թվականը դնում ենք ենթադրաբար»[1], մինչդեռ արձանագրության բուն բովանդակությունը և թվագիրը բացահայտվում է հեշտությամբ և տարընթերցումների առիթ չի տալիս: Մելիքին վայել տապանաքարին փորագրիչը պարզ և հեշտ ընթեռնելի փորագրել է մահվան թվականը՝ **ՌՄԻԸ** (1779): Ամենազարմանալի սխալներից մեկը, որ տեղ է գտել Ս. Բարխուդարյանի վերծանած տեքստում, բնագրում ընդմիջարկված «**ՄԱԼԽԱՍԻՆ ՈՒ ՄԻՐԻՆ**» անուններն են, ինչը և տեղիք է տվել նշված թյուր ըմբռնումներին: Նա ավելացրել է նաև բնագրում բացակայող «**ԱՄԻՆ**» բառը: Մեզ համար անհասկանալի է մնում, թե ինչպես են ծագել այս անունների և բառի ընթերցումը, որովհետև, տեղում ուշադիր զննելով արձանագրությունը, այնտեղ չենք գտնում դրանցից և ոչ մեկը: Նկատենք, որ այդ նորամույծ անուններն ու «**ԱՄԻՆ**» բառը նշված չեն նաև արձանագրությունն առաջին անգամ հրատարակած Մ. վրդ. Տեր-Մովսիսյանի մոտ: Տեղին նշենք, որ այդ անունների՝ պատմական, իրական անձինք լինելը չեն փաստվում մատենագրական և վիմագրական որևէ աղբյուրով: Ի դեպ՝ Ս. Բարխուդարյանի աշխատությունում առկա են նմանաբնույթ այլ վրիպումներ ևս: Ինչպես, օրինակ, Մեծ Մելիք-Օհանի՝ Ծակերի ձորի հյուսիսային մասում՝ Կամի ձորակում, իր և ծնողների հիշատակին կառուցած եկեղեցու արձանագրությունը նա տեղադրում է Գորիս գյուղում (Նոր կամ Ներքին Գորիս) գտնվող վիմափոր Ս. Մարտիրոս մատուռի հարավային մուտքի բարավորին[2]: Այնինչ Ս. Մարտիրոսը չունի հարավային դուռ:

Նախընթացում նշեցինք, որ Գորիսի մելիքության հաստատման ժամանակի և առաջին մելիքի ով լինելու հարցերին անդրադարձել է նաև Ս. Հախվերդյանը՝ հիմնականում հիմք ընդունելով Ս. Բարխուդարյանի վերոնշյալ արձանագրության վերծանած տեքստը: Մերժելով XVIII դ. 50-ական թվականների

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում:

վերջերին Գորիսի մելիքության հիմադրման իրողությունը՝ Ս. Հախվերդյանը, մելիքությունը վաղեմի դարձնելու միտումով, առանց որևէ հավաստի սկզբնաղբյուրային տվյալների, մելիքության սկիզբ է համարում XVI դարը: «Կան ուրիշ գրավոր փաստեր (sic!),- գրում է Ս. Հախվերդյանը,- որոնք վկայում են, որ Գորայք-Գորես-Գորիսում մելիքական տոհմը ծագում է վաղուց»[1]: Իր տեսադրույթը հիմնավորելու համար Ս. Հախվերդյանը վկայակոչում է Ա. Բակունցի «Կյորես» վիպակում տեղ գտած «…Թիւ ՌԺԴ (1565) … Ես Մելիք Էգան կառու(ցի) …»[2] վիմագրական տեղեկությունը և, տարակուսելիորեն տարբերակելով Եգան և Օհան անձնանունները, Եգանին ևս դասում է մելիքների շարքում: Տեղին նշենք, որ Ս. Հախվերդյանի մոտ բացակայում է վերոնշյալ մեջբերման առաջին հատվածը, որը հստակություն է մտցնում խնդրո առարկա հարցի մեջ:

Շարունակելով քննությունը՝ կրկին անդրադառնանք Ս. Բարխուդարյանի վերծանած արձանագրության տեքստի քննությանը: Նշենք, որ թեև Ս. Բարխուդարյանը հստակ գրում է, որ արձանագրության «...թվականը դնում ենք ենթադրաբար», այդուհանդերձ, ափսոսանքով պետք է նշել, որ այս հանգամանքը չի խանգարել Ս. Հախվերդյանին կատարել կանխակալ եզրահանգումներ: Այսպես՝ թերևս անձամբ տեղում չստուգելով արձանագրությունը և հիմնվելով միայն Ս. Բարխուդարյանի սխալաշատ վերծանության վրա, խորամուխ չլինելով վիմագրական փաստերի մեջ, առանց որևէ սկզբնաղբյուրային վկայության՝ նա շտապում է եզրակացնել (որը, ըստ նրա, կասկածի ենթակա չէ), թե իբր Մելիք-Օհանից առաջ եղել է Օհան անունով մի մելիք ևս, որը «...կրել է Մեծ մականունը և ապրել է XVI դարում, գուցե ավելի վաղ, քանի որ արձանագրության մեջ նշված Մալխասն ու Միրին իրենց կոչում են Մեծ Օհանի սերունդ»[3]: Ակներև է, որ Ս. Հախվերդյանին թյուրիմացության մեջ է դրել վիմագրում Ս. Բարխուդարյանի ընդմիջարկած «**ՄԱԼԽԱՍԻՆ ՈՒ**

---

[1] **Հախվերդյան Ս.**, Գորիսի ամփոփ պատմություն, էջ 164:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

**ՄԻՐԻՆ**» անունները, ուստի նրա եզրակացությունը հիմնված է անիրական փաստերի վրա, որոնք չեն հիմնավորվում հավաստի աղբյուրներով: Ս. Հախվերդյանն ուշադրություն չի դարձրել այն կարևոր հանգամանքի վրա, որ արձանագրության նորամույծ անունները բնավ չեն պարունակում իմաստային-բովանդակային հատկանիշներ: Ավելին, Ս. Հախվերդյանը, Մեծ Մելիք-Օհանին համարելով XVI դարի գործիչ, նրանից հետո Գորիսի մելիքների շարքում հաջորդաբար զետեղել է նորամույծ անուններ (Եգան, Մալխաս, Միրի, Բաբա Պարոն, Խոջա Լալա, Բաղիր բեկ, Մելիք Օհան)[1], դրանով իսկ խախտել ոչ միայն Գորիսի մելիքության հիմնադրման ժամանակաշրջանը, այլև՝ առաջին մելիք՝ Մեծ Մելիք-Օհանին հաջորդած մելիքների՝ ավագ և կրտսեր որդիներ՝ Մելիք-Հովսեփի (Ուսուբ, 1779 թ.-1780-ական թթ. սկզբներ) և Մելիք-Հուսեինի (Սե(ի)յին, 1780-ական թթ. սկզբներ-1813 թ.), և ապա վերջինիս որդիներ՝ Առուստամի (1813-1822 թթ.), ու Հարությունի (Թյունի, 1822-1843 թթ.) պաշտոնավարման ժամանակագրական հաջորդականությունը:

Քննությունը համակողմանի կատարելու համար հարկ ենք համարում անդրադառնալ մի կարևոր խնդրի պարզաբանմանը ևս, որը նույնքան կարևոր է ինչպես Ս. Հռիփսիմե եկեղեցու կառուցման, այնպես էլ Մեծ Մելիք-Օհանի մահվան թվականի հարցը քննելիս: Բանն այն է, որ Ֆրանսիայում գործող «Երկիր և մշակույթ» հասարակական-բարեգործական կազմակերպության նախաձեռնությամբ 2010 թ. հուլիսի 28-ից օգոստոսի 31-ը «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն»-ի կազմակերպած հնագիտական աշխատանքների (գիտ. խորհրդատու՝ Հ. Սիմոնյան, ջոկատի ղեկավար՝ Խ. Վարդանյան) առիթով Ս. Հռիփսիմե եկեղեցին վերականգնող ճարտարապետ Ստեփան Նալբանդյանի հեղինակած՝ ««Հին Գորիս» բնակատեղի Սբ. Աստվածածին եկեղեցի 1771 թ. (փաստաթղթեր, հ. 3)» վերտառությամբ ուսումնասիրության մեջ եկեղեցու կառուցման և Մեծ Մելիք-Օհանի մահ-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 165:

վան թվականի հարցում նույնպես առկա են էական անճշտություններ: Այսպես՝ հեղինակն առանց լուսաբանելու և վերլուծելու Մեծ Մելիք-Օհանին վերաբերող վիմագրական վերոնշյալ հավաստի արձանագրությունը, առաջնորդվելով միայն Ս. Բարխուդարյանի թերի ընդօրինակած վերոնշյալ արձանագրության վերծանությամբ, փորձել է այն ներկայացնել իբրև հաստատված ճշմարտություն: Մեծ Մելիք-Օհանի մահվան թվական համարելով 1771 թ.-ը՝ Ս. Նալբանդյանը գրում է, թե իբր եկեղեցին կառուցվել է այդ թվականին՝ ի հիշատակ Մելիք-Օհանի[1]: Որպես փաստարկ իր հայտնած տեսակետի՝ Ս. Նալբանդյանը վկայաբերում է եկեղեցու կառուցման արձանագրության «**ՌՄԻԵ**» թվականը և մատնանշում, որ թեականորեն պետք է վերաբերվել տարեթիվ նշող վերջին **Ե** տառին՝ գտնելով, որ այն պետք է կարդալ **Ն**: «Սակայն կասկածներ կան,- գրում է նա,- վերջին «**Ե**» տառի հետ կապված, որն այն իրականում «**Ն**» է: Եթե ընդունենք, որ դա այդպես է, ապա վերջին տառը զուրկ է թվային արժեքից և պետք է կարդալ «1220-(Ի)Ն», որին գումարելով 551 ստանում ենք 1771, այսինքն՝ այն թվականը, որին մահացել է մելիք Օհանը»[2]: Տեղին նշենք, որ Ս. Նալբանդյանի եզրահանգումը հաստատող այլ կռվաններ չկան: Հստակ է, որ արձանագրության չորրորդ տողում, ուր տեղ է գտել **ՌՀԱՆԻՆ** բառը, փորագրիչը որոշակիորեն տարբերակված ձևով է փորագրել **Ն** տառը, որը բնավ նման չէ **Ե**-ին: Եվ քանի որ Ս. Հռիփսիմե եկեղեցու կառուցման արձանագրության վերջին տառը գրչության տեսակետից պարզորոշ կարդացվում է **Ե** և ոչ թե՝ **Ն**, և, անտարակույս, Մեծ Մելիք-Օհանն էլ մահացել է **ՌՄԻԸ** (1799) թվականին, ուստի եկեղեցին կառուցվել է նրա մահվանից առաջ՝ **ՌՄԻԵ** (1776) թվականին:

Այսպիսով, առանց երկբայելու պետք է արձանագրել, որ եկեղեցին կառուցվել է ոչ թե 1771 թ. մահացած Մեծ Մելիք Օհանի հիշատակին, այլ՝ վերջինս է 1776 թ. կառուցել՝ ի հիշա-

---

[1] Տե՛ս **Նալբանդյան Ս**., ««Հին Գորիս» բնակատեղի Սբ. Աստվածածին եկեղեցի 1771 թ. (փաստաթղթեր, հ. 3)», Երևան, 2011 (առանց էջակալման):

[2] Նույն տեղում:

տակ իրեն, այնպես, ինչպես կենդանության օրոք նա Ծակերի ձորում իր և ծնողների հիշատակին 1765 թ. կառուցել էր բազիլիկ եկեղեցի: Հետևաբար արձանագրենք, որ Ս. Հռիփսիմե եկեղեցու շինարարական արձանագրությունը ևս ավանդում է, որ Մեծ Մելիք Օհանն է եղել երկու այդ կառույցների պատվիրատուն, հովանավորողը (կտիտորը): Հանգամանք, որն ունի իր նախադեպերը: Զորօրինակ՝ Ծղուկ գավառի գեղատեսիլ Լորաձորի հովտում գտնվող Լոր գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, որն իր և որդիների հիշատակին իր իսկ ծախսով 1664 թ. կառուցել է տվել ագուլեսցի խոջա Պողոսը. «…եկեղեցին ինչպէս մի արձանագրութիւնից երևում է՝ շինել է Ագուլեցի խոջա Պօղոսն իւր ծախքով, իւր յիշատակին…»[1]:

Մեծ Մելիք-Օհանին կից թաղված է որդին՝ Բաղրը, որի պարզ և հեշտ ընթերցվող քանդակազարդ տապանաքարին արձանագրված է.

«**ԱՅՍ Է ՏԱՊԱՆ † ՄԷԼԻՔ † ՀՈՒԱՆԻ † ՈՐԴԻ ԲԱՂԻՐ ԲԷԿ/ԻՆ. ԹՎ.: ՌՄԻԷ (1778)**»[2]:

Արձանագրությունը ժամանակին ընդօրինակել, վերծանել և հրատարակել է Ս. Բարխուդարյանը և այն թվագրել՝ **ՌՄԻ** (1771), իսկ գրչանկարում՝ **ՌՄԻԼ** թվականով, միաժամանակ պարզաբանել, որ «Թվականության վերջին **Լ**-ն կամ ավելորդ է կամ **Ա**-ի մնացորդ»[3]: Նշենք, որ թեև թվականի վերջին հատվածը խիստ մաշված և վնասված է, սակայն **Ի** տառից հետո ուրվագծվում է ոչ թե **Լ**, կամ **Ա**, այլ՝ դժվարընթեռնելի, սակայն մոտիկից հստակ ուրվագծվող **Է** տառի բնորոշ մասնիկը: Մենք դրանում համոզվեցինք, երբ 2019 թ. հունիսի 7-ին մի վերջին անգամ մոտիկից հետազոտեցինք արձանագրությունը: Ըստ այդմ՝ այն թվագրվում է **ՌՄԻԷ** (1778) թվականով:

Սույն արձանագրության վերծանմանն անդրադարձել է նաև Ս. Հախվերդյանը: Ցավոք, ստիպված ենք արձանագրել, որ

---

[1] Հնութիւնք վանօրէից Սիւնեաց աշխարհի: Գիրք հինգերորդ, կազմեց՝ Մ. Փափազեանց, Վաղարշապատ, 1982 (էջակալման):

[2] **Ստեփանյան Գ.**, Գորիս, ԴՀՆ (2011-2012 թթ.), տետր № 2, էջ 5:

[3] Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 80:

նա այս դեպքում ևս վիմագիրն ըստ էության տեղում չի ընթերցել և չի հոգացել արձանագրության բովանդակության հավաստի վերծանման ու թվագրման մասին, այլ բավարարվել է միայն իր ձեռքի տակ եղած Ս. Բարխուդարյանի վերծանությամբ: Տապանաքարն անվերապահորեն վերագրելով Մելիք-Օհանին և հիմք ընդունելով Ս. Բարխուդարյանի վերծանած վերոնշյալ երկու արձանագրությունների սխալ թվագրումը՝ Ս. Հախվերդյանը գրում է. «Մելիք-Օհանի գերեզմանը գտնվում է հին Գորիսի հանգստարանի բլրի եկեղեցու հարավային պատի տակ: Տապանաքարի վրա կարդում ենք.
«Այս է տապան – Մելիք Հուանի (Օհան) որդի Բաղիր բեկին. Թվ ՌՄԻ: (1771)»[1]: Բերված արձանագրության բովանդակությունից, սակայն, ամենևին էլ չի բխում այն հետևությունը, որ անում է Ս. Հախվերդյանը: Միանշանակ չի կարելի համաձայնել Ս. Հախվերդյանի հետ նախ՝ այն պատճառով, որ տապանաքարը գտնվում է ոչ թե «բլրի եկեղեցու հարավային պատի տակ», այլ՝ Մելիք-Հուսեինյանների տոհմական «Մելիքների» անվամբ դամբարան-մատուռից ավելի քան 80 մ հեռավորության վրա՝ Մեծ Մելիք-Օհանի տապանաքարին կից, և երկրորդ, որն ամենաէականն է, արձանագրության տառաշարքի իմաստային ստույգ բառանջատման և բովանդակության ուշադիր վերլուծությունը ցույց է տալիս, որ տապանաքարը պատկանում է ոչ թե Մեծ Մելիք-Օհանին, այլ՝ 1778 թ. մահացած նրա որդուն՝ պապի անունը կրող Բաղրին: Այն, որ տապանաքարը պատկանում է Բաղրին, փաստվում է հենց Մեծ Մելիք-Օհանի կողմից տապանաքարի գլխամասում կանգնեցված խաչքար-կոթողով, որն ունի փոքրաթիվ կցագրերով եռատող, քիչ մաշված, սակայն մոտիկից ուրվագծվող տառերի բնորոշ մասնիկներով հետևյալ արձանագրությունը.

«[Ա]ՅՍ Է ԽԱՉՍ/ ՄԷԼԻՔ ՀՈԱՆ/ԳԱԿՅՈՒՐՑ»[2]:

Ուշագրավ է վիմագրում **ԳԱԿՅՈՒՐՑ** բառի գործածությունը, որը Ս. Բարխուդարյանը վերծանել է վրիպումով՝

[1] **Հախվերդյան Ս.**, Գորիսի ամփոփ պատմություն, էջ 163:
[2] **Ստեփանյան Գ.**, Գորիս, ԴՀՆ (2011-2012 թթ.), տետր № 2, էջ 5:

**ԱԿՅՈՐՑ**[1]**:** Հայտնի է, որ շատ դեպքերում արձանագրություններում կիրառվել են բարբառային ձևեր ունեցող մի շարք անուններ ու բառեր: Նկատվում են նաև գրչության որոշ օրինաչափ շեղումներ և հնչունային հապավումներ: Սյունիքում, մասնավորապես Գորիսի բարբառում, նման բառ ու բառաձև չկա, ուստի, որքանով կարող ենք դատել արձանագրության բովանդակությունից, իբրև զուտ նախնական վարկած, կարելի է ենթադրել, որ **ԳԱԿՅՈՒՐՑ** ձևը *կանգնեցրի* (բրբ. *կանգնեցրեցի*) բայաձևերի սխալ գործածության հետևանք է:

**Մեծ Մելիք-Օհանի (ձախից) և նրա որդու՝ Բաղրի տապանաքարերը «Մելիքների» դամբարան մատուռից ներքև**

Մի նկատառում ևս: Ս. Հախվերդյանը մելիքների շարքին է դասել նաև Բաղր բեկին, ով կարող էր ժառանգել մելիքական իրավունքը հոր մահից հետո միայն: Մինչդեռ վերոնշյալ վիմագիր արձանագրությունը վկայում է, որ Բաղրը մահացել է Մեծ Մելիք-Օհանի կենդանության օրոք: Բացի այդ՝ մեր եզրա-

[1] Դիվան հայ վիմագրության, պրակ II, էջ 80:

հանգման օգտին է խոսում այն փաստը, որ Բաղրի տապանաքարին արձանագրված է ոչ թե մելիք, այլ՝ բեկ տիտղոսը: Այսպիսով՝ ասվածի լույսի ներքո կարելի է սպառված համարել Մեծ Մելիք-Օհանի և նրա որդու՝ Բաղրի տապանաքարերի հիշատակագրության վերծանության մեր սրբագրումները, որ անհրաժեշտ էր թեկուզև գիտական շրջանառության մեջ դրված **ՌԻԱ** (1572) և **ՌՄԻ** (1771) անիրական թվականները հերքելու նպատակով:

Ամփոփենք: Ըստ ժամանակագրական կարգի՝ Ձագեձորի հովտում նախ՝ հիմնվել է Վարարակն գետակի վերին հոսանքի ձորամիջում Ստեփաննոս Օրբելյանի վկայակոչած Գորայք-Գորիսը, ապա՝ XVIII դ. 60-ական թվականների վերջերին, Լաստի խութ լեռան հյուսիսային լանջերն ակոսող ձորում, Վարարակն գետակի ձախափնյակում՝ Նոր Գորիսը:

XVIII դ. 50-ական թվականների վերջերին Սյունիքի Հաբանդ կամ Ձագեձոր գավառում Տաթևի ընդարձակ մելիքությունից կազմվել է Ղարաբաղի խանությանը ենթակա Գորիս-Կյորես նստոց-կենտրոնով մի նոր մելիքություն: Մելիքության հիմնադիրն էր Գորայք-Գորիս (Հին Գորիս, Վերին Շեն) գյուղի մեծատուն տոհմից սերող, խոջա Լազարի թոռ՝ Բաղրի որդի Օհանը: Ընդսմին՝ վիմագրական փաստերով ճշտվեց նաև, որ Մեծ Մելիք-Օհանը մահացել է ոչ թե 1771 թ, այլ՝ 1779 թ., իսկ նրա որդին՝ Բաղրը՝ 1778 թ.:

# ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԳՈՐԻՍԻ ՄԵԼԻՔՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՄԵԼԻՔԻ՝ ՄԵԾ ՄԵԼԻՔ-ՕՀԱՆԻ ՈՒՆՐԱ ՈՐԴՈՒ՝ ԲԱՂՐԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

## ԱՄՓՈՓՈՒՄ

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

XVIII դ. 50-ական թվականների վերջերին Սյունիքի Հաբանդ կամ Զագեձոր գավառում Տաթևի ընդարձակ մելիքությունից կազմվել է Ղարաբաղի խանությանը ենթակա Գորիս-Կյորես նստոց-կենտրոնով մի նոր մելիքություն: Մելիքության հիմնադիրն էր Գորայք-Գորիս (Հին Գորիս, Վերին Շեն) գյուղի մեծատուն տոհմից սերող, խոջա Լազարի թոռ՝ Բաղրի որդի Օհանը: Ընդսմին՝ վիմագրական փաստերով ճշտվեց նաև, որ Մեծ Մելիք-Օհանը մահացել է ոչ թե 1771 թ, այլ՝ 1779 թ.: Իսկ նրա որդին՝ Բաղրը մահացել է 1778 թ.:

**Բանալի բառեր** - Վիմագրություն, Հաբանդ-Զագեձոր, Գորայք-Գորիս (Հին Գորիս, Վերին Շեն), Ծակերի ձոր, Նոր կամ Ներքին Գորիս (Ներքին Շեն), Մեծ Մելիք-Օհան, Բաղր:

# АНАЛИЗ ОСНОВАНИЯ ГОРИССКОГО МЕЛИКСТВА И ЛИТОГРАФИЧЕСКИХ НАДПИСЕЙ ПЕРВОГО МЕЛИКА МЕЦ МЕЛИК-ОГАНА И ЕГО СЫНА БАГРА

## РЕЗЮМЕ

**ГЕВОРГ СТЕПАНЯН**

В конце 50-ых годов XVIII века в Абандском или Дзагедзорском уезде Сюника от обширного Татевского меликства отделилось и образовалось новое

меликство с центром в Горис-Кересе под подчинением Карабахского ханства. Основателем меликства был сын Багра Оган – представитель знатного рода из села Горайк-Горис (Старый Горис, Верин Шен). Литографическими свидетельствами доказывается, что Мец Мелик-Оган скончася не в 1771, а в 1779 году.

**Ключевые слова:** литография, Абанд-Дзагедзор, Горайк-Горис (Старый Горис, Верин Шен), Цакери дзор, Новый или Неркин Горис (Неркин Шен), Мец Мелик-Оган, Багр.

## SOME OBSERVATIONS RELATING TO THE LITOGRAPHIC RECORDS OF THE FOUNDER AND THE FIRST MELIK OF GORIS - PRINCEDOM MELIK-OHAN THE GREAT, AND HIS SON BAGHR


### SUMMARY



GEVORG STEPANYAN



In the late 50s of the 18th century a new princedom with a residential centre called Goris-Kyores, subject to Karabagh khanate was formed from the large Tatev princedom in the province Haband or Dzaguedzor of Syunik. The founder of the princedom was Khojah Lazar's/who came down from the grand family Gorayk-Goris(old Goris, the village of Verin Shen) grandson and Baghr's son Ohan. Besides, it has also been discovered that Melik-Ohan the Great died in 1771 rather than in 1779.



**Key words**: lithography, Haband – Dzaguedzor, Gorayk-Goris (old Goris, the village of Verin Shen), the gorge of Tsakeri, New or Inner Goris (Inner Village), Melik-Ohan the Great, Baghr.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. **Ալիշան Ղ.**, Սիսական: Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, 600 էջ:
2. **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, 659 էջ:
3. «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, 1897, գիրք Բ, 383 էջ:
4. **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, 461էջ:
5. **Բարխուտարեանց Ս.**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, 192 էջ:
6. **Բալայան Վ.**, Շուշի. Տեղն ու դերը Հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, 2017, 560 էջ:
7. **Բակունց Ա.**, Կյորես, Ընտրանի, Երևան, 2009, էջ 719:
8. **Բակունց Վ.**, Մեծ հույզերի սերմնացանը, Երևան, 1976, ծան. 2, էջ:
9. **Գրիգորյան Գ.**, Գյուղական նոր բնակավայրերի հիմնումն ու բնակչության վերաբնակեցումը միջնադարյան Հայաստանում (Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր. Հայկական լեռնաշխարհը հայ էթնոսի բնօրրան: Հայագիտական գիտաժողով (զեկուցումների հիմնադրույթներ), Երևան, 2004, էջ 39-40:
10. Դիվան հայ վիմագրության: Պրակ II: Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ: Կազմեց՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1960, 240 էջ:
11. **Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, գիրք Ա, Վենետիկ, 1903-1905, 808 էջ:
12. Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա: Կազմեց՝ **Ա. Սաֆրաստյան**, Երևան, 1961, 404 էջ:
13. Ժամանակագրութիւն **Ստեփաննոսի Օրբէլեանի**: Հրատարակության պատրաստեց **Աշ. Աբրահամյանը**, Երևան, 1942 45 էջ:
14. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: Մասն Ա (1401-1450 թթ): Կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Երևան, 1955, 817 էջ:

15. **Լալայեան Ե.**, Զանգեզուր: Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, «Ազգագրական հանդէսե, Թիֆլիս, 1898, գիրք Դ, № 2, էջ 7-16:
16. **Լիսիցյան Ստ.**, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, 336 էջ:
17. **Խանզադյան Ս.**, Տեր-Հակովբ Տեր-Մինասյան Գորիսեցու «Հիշատակարանը», ԲՀԱ, Երևան, 1989, № 2, էջ 125-136:
18. **Խանզադյան Ս.**, Վիմագրերի աշխարհում, «Սովետական Հայաստան», Երևան, 1980, № 5, էջ 29:
19. ՀԱԱ, ֆ. 47, ց. 1, գ. 693 ; ֆ. 1109, ց. 1, գ. 46 ; ֆ. 798, ց. 1, գ. 1220 ; ֆ. 1063, ց. 1, գգ. 368, 1426, 1545:
20. **Հակոբյան Թ.**, **Մելիք-Բախշյան Ստ.**, **Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, 4814 էջ:
21. Հայաստանի Հանրապետության ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների համառոտ տեղեկատու-բառարան, Երևան, 2007, 136 էջ:
22. Հայոց պատմություն, հ. III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.): Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Երևան, 2010, 757 էջ:
23. Հնութիւնք վանօրէից Սիւնեաց աշխարհի: Գիրք հինգերորդ, կազմեց՝ Մ. Փափազեանց, Վաղարշապատ, 1982 (էջակալման):
24. **Հախվերդյան Ս.**, Գորիսի ամփոփ պատմություն, Երևան, 2005, 446 էջ:
25. **Հասրաթյան Մ.**, «Ձորաշէն-Գորու», ՀԱԱ, ֆ. 1109, ց. 1, գ. 46, թ. 2:
26. **Ղարագյոզյան Ա.**, Ձագաձորի տեղադրությունը, ԼՀԳ, Երևան, 1985, № 11, էջ 58-62:
27. **Մարգարյան Ալ.**, Գորիսի բարբառը, Երևան, 1975, 568 էջ:
28. **Մարգարյան Ալ.**, Մի քանի տեղանունների ծագման մասին, ՊԲՀ, Երևան, 1988, № 4, էջ 123-124:
29. **Մեսրոպ Մագիստրոս արքեպ. Տէր Մովսիսեան**, Հայկական երեք մեծ վանքերի Տաթեւի, Հաղարծնի եւ Դաղի եկեղեցիները եւվանական շինութիւնները, Երուսաղէմ, 1938, 152 էջ:

30. **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ Գ. (ԺԸ-ԺԹ դդ), Երևան, 1955, 345 էջ:
31. «Մեղու Հայաստանի», Թիֆլիզ, 1886:
32. **Նալբանդյան Ս.**, ««Հին Գորիս» բնակատեղի Սբ. Աստվածածին եկեղեցի 1771 թ. (փաստաթղթեր, հ. 3)ե, Երևան, 2011 (առանց էջակալման):
33. «Նոր-Դար», Թիֆլիս, 1885:
34. **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, 458 էջ:
35. **Սարգսյան Ս.**, Արցախի բնակավայրերը (ստուգաբանություններ), Երևան, 2018, 200 էջ:
36. **Ստեփանյան Գ.**, Սիմեոն Տեր-Մինասյան. մանկավարժն ու հրապարակախոսը (Գորիսի պատմության դրվագներ), Երևան, 2019, 615 էջ (ձեռագրի իրավունքով):
37. **Ստեփանյան Գ.**, Գորիս (դաշտային հետազոտական նյութեր, (2011-2012 թթ.), տետր № 2, 10 էջ:
38. **Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանց**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մաս Ա, Բ: Գրաբարից աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ **Ս. Գրիգորյանի**, Երևան, 2016, 694 էջ:
39. **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** պատմութիւն Տանն Սիսական, ի լոյս ընծայեաց **Մկրտիչ Էմին**, Մոսկվա, 1861, 387 էջ:
40. **Ширакуни Н.**, Зангезурский уездь Елизаветпольской губернии (гл. VII, Бывшие армянские мелики). Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XXXIV, Тифлис, 1904, отд. I, с. 202-204.
41. **Ղաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1963, 559 էջ:
42. **Փաշայան Ռ.**, Արամ և Արտաշես Վրույրներ, Երևան, 1989, 105 էջ:
43. **Քումունց Մ.**, «Գորիս» տեղանվան ստուգաբանություն: Գիտական հոդվածների ժողովածու (Նվիրվում է Հրաչյա Աճառյանի ծննդյան 140-ամյակին), Երևան, 2016, էջ 378-396:

**44.** Армяно-русские отношения в втором тридцатилетии XVIII века. Сборник документов, т. III, отв. ред. **В. Восканян**, Ереван, 1978, 409 с.

**45.** **Петрушевеский И.**, Очерки по истории феодальных отношений в Аэербайджане и Армении в XVI – начале XIX вв., Ленинград, 1949, 384 с.

**46.** Mémoires historique et géographiques sur l'Arménie, **J. A. Saint-Martin**, t. II, Paris, 1819, 519 p.